# Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

33ՐԴ. ՏԱՐԻԹԻՒ 39 (1639) ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 26, 2013
VOLUME 33, NO. 39 (1639) SATURDAY, OCTOBER 26, 2013

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Սպիտակ Տան մէջ պահուող հայկական գորգի ցուցադրութիւնը չեղեալ յայտարարուած է




*Յակոբ-Մարտին Տէրանեանի՝ «Նախագահ Քալվին Քուլիճն եւ Հայ Որբերու Գորգը» գիրքի կողքը*

*Ամերիկեան «Ուաշինկթըն Փոսթ» թերթը կը տեղեկացնէ որ, Սպիտակ Տան մէջ պահուող եւ հայ որբերու կողմէ գործուած գորգի ցուցադրութիւնը չեղեալ յայտարարուած է՝ հաւանաբար Թուրքիոյ կողմէ եղած ժխտական արձագանքին հետեւանքով:*

*«Ուաշինկթըն Փոսթ» այս առթիւ կը կը գրէ,- «Գորգը 1920-ական թուականներուն գործած են հայ որբ երեխաներ եւ Սպիտակ Տան մէջ պաշտօնապէս ցուցադրուած է 1925- ին: Նկարին մէջ կը տեսնուի նախագահ Քալվին Քուլիճ՝ կանգնած գորգի վրայ, որ ոչ միայն անչափահաս երեխաներու աշխատանքի արդիւնք է, այլ բարդ, մանրակրկիտ աշխատանք, մը, որ արժանի է մեծ հաստատութիւններուն: Գորգի վրայ գծուած բոյսերն ու կենդանիները*

*Շար.ը էջ 4*

## Հայաստանի ժողովուրդի 74 տոկոսը մտահոգուած է կաշառակերութեամբ



*Հանրային կարծիքի ուսումնասիրութեան «Gallup» կազմակերպութիւնը հրապարակած է 2012 թուականին 129 երկրներու մէջ կազմակերպած իր հարցախոյզի արդիւնքները, որոնց համաձայն՝ այդ երկիրներէն 108-ի պարագային ժողովուրդի մեծ մասը կաշառակերութիւն-փտախտը տարածուած երեւոյթ նկատած են իրենց պետական համակարգէն ներս: Հայաստանի պարագային նման կարծիք արտայայտած են հարցախոյզին մասնակցողներու 74 տոկոսը:*

*«Gallup» տարբեր երկիրներու հարցախոյզերու արդիւնքները իրար հետ կը համեմատէ առանձին խումբերով՝ ազատ, մասամբ ազատ եւ ոչ ազատ մամուլ ունեցող երկրներու համար, յայտնելով, որ կաշառակերութեան մասին հարցերը բաւական նուրբ հարցեր են, յատկապէս ազատ խօսքը ճնշող երկիրներու մէջ, հետեւաբար՝ այդ երկիրներուն մէջ արձանագրուած արդիւնքները կրնան վկայել այն մասին, որ քաղաքացիները կը խուսափին բարձրաձայն խօսիլ կաշառակերութեան մասին եւ քննադատել իշխանութիւններուն:*

*Հայաստան ընդգրկուած է ոչ ազատ մամուլ ունեցող երկիրներու շարքին:*

*Վրաստանը դասուած է մասամբ ազատ մամուլ ունեցող երկիրներու շարքին եւ ժողովուրդի 25 տոկոսը մտահոգութիւն յայտնած է կաշառակերպութեան կապակցութեամբ: Ատրպէյճանի մէջ 69 տոկոսը նման կարծիք յայտնած է, իսկ Թուրքիոյ մէջ 53 տոկոսը:*

*Միւս կողմէ, Ուաշինկթընի մէջ գործող «Policy Forum Armenia» վերլուծական կեդրոնը հրապարակած է «Երկրի իրավիճակը» շարքէն իր հերթական զեկոյցը՝ «Փտախտը Հայաստանի մէջ» վերտառութեամբ: Գիտութեան տարբեր ուղղութիւնները ներկայացնող մասնագէտներու խումբի աշխատանքի արդիւնք հանդիսացող այս զեկոյցը կը լուսաբանէ Հայաստանի մէջ կաշառակերութեան դրսեւորման մեծ ու փոքր դէպքեր եւ կ'առաջարկէ անոնց նուազեցման միջոցները:*

*«Policy Forum Armenia» կազմակերպութեան համաձայն, զեկոյցի հիմնական եզրակացութիւնը այն է, որ Հայաստանի տնտեսութեան վրայ փտախտի բացասական ազդեցութիւնը ահռելի է:*

*Զեկոյցը մատնացոյց կ'ընէ, որ Հայաստանի մէջ հանրային քաղաքականութիւնը կը մշակուի եւ կ'իրականացուի գլխաւորաբար ամուր արմատներ ունեցող կուռմպացուած էլիտ դասակարգի համար, եւ ոչ թէ քաղաքացիներու շահերը սպասարկելու համար:*

*«Policy Forum Armenia» կազ-*

*Շար.ը էջ 5*

## Զարուհի Փոստանջեանին հանեցին ԵԽԽՎ պատուիրակութեան կազմէն

*Յունուարի 1-էն սկսեալ ընդդիմադիր «Ժառանգութիւն» կուսակցութիւնը ներկայացուցիչ պիտի չունենայ Եւրոպայի Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովէն ներս: Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Յովիկ Աբրահամեան սահմանած է միջազգային պատուիրակութիւններուն մէջ ներկայացուելու համամասնութիւնը, որու հետեւանքով «Ժառանգութեան» փոխարինող անդամի տեղը տրուած է իշխանական «Օրինաց Երկրին»:*

*Վեհաժողովէն ներս «Ժառանգութեանը» կը ներկայացնէր Զարուհի Փոստանջեան: «Ժառանգութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Փոստանջեանի կարծիքով Աբրահամեանի այս քայլը անմիջականօրէն կապ ունի քաղինոյի մէջ խաղալու մասին Սերժ Սարգսեանին վերջերս տուած իր հարցումին հետ:*

*«Ինձ հետապնդում են այդ հարցի համար», - յայտարարեց Փոստանջեան, - «Յովիկ Աբրահամեանը ինքն է իր դէմ ցուցմունք տուել, որ ինքը հետապնդում է «Ժառանգութեան» ներկայացուցչին, այն բանի համար, որ նա հարց է յղել Սերժ Սարգսեանին»:*

*Ընդդիմադիր պատգամաւորի կարծիքով՝ Յովիկ Աբրահամեանի նախաձեռնութիւնը նաեւ այլ ենթատեքստ ունի եւ «Ժառանգութեանը» մեկուսացուցին, որպէսզի եւրոպական այդ կարեւոր հարթակին վրայ ներկայացուած ըլլան միայն Մաքսային Միութեան կողմ եղող ուժերը:*

*«Ձեզ դժուարին օրեր են սպասւում, այդ գործողութիւնները Ձեզ չեն ներուելու», - Ազգային Ժողովի դահլիճէն ներս Աբրահամեանին այս բառերով դիմեց Զարուհի Փոստանջեան, որ եւրոպական տարբեր կառոյցներուն ուղղուած նամակներ սկսած է պատրաստել:*

*Պատգամաւորի կարծիքով՝ պատուիրակութեան ընդդիմադիր անդամը իշխանականով փոխարինելով խախտուած է բազմակարծութիւնը, ինչ որ Եւրոպան չի ներեր: «Եւ ոչ միայն Յովիկ Աբրահամեանին, իհարկէ, նաեւ իր, այսպէս ասենք՝ խմբակի ղեկավարին՝ Սերժ Սարգսեանին, նոյնպէս շատ հետաքրքիր օրեր են սպասւում», յայտարարեց Զարուհի Փոստանջեան:*

## Հայաստանի Վարչապետ. «Մաքսային Միութեան եւ ԵՄ-ի միջեւ քաղաքական գործընթացներն իրար փոխլրացնող են»

*«Հայաստանի քաղաքական դիրքորոշումը չի փոխուել, մենք միշտ յայտարարել ենք, որ Մաքսային Միութեան եւ Եւրոմիութեան միջեւ քաղաքական գործընթացները համարում ենք իրար փոխլրացնող»: Նման յայտարարութիւն Հոկտեմբերի 23-ին, Ազգային Ժողովէն ներս կատարեց ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսեան, պատասխանելով անկախ պատգամաւոր Խաչատուր Քոքոբէլեանի հարցին, թէ շարունակէ՞ համարել, որ ԵՄ-ն ու Մաքսային Միութիւնը չեն հակասեր մէկը միւսին:*

*«Ինչ վերաբերում է փաստաթղթերին, այո, դրանցում կարող են լինել կէտեր, որոնք կարող են հակասել իրար, եւ դա բնական է: Դա ենթադրում է, որ մենք պէտք է կարողանանք հարթել այդ բացթողումները բանակցութիւնների միջոցով»,-ըսած է Տիգրան Սարգսեանը:*

*«Հայաստան իր առջեւ նպատակ դրած է դիւերսիֆիկացնել իր արտաքին յարաբերութիւնները, եւ այդ առումով երկիրը չի կարող միայն մէկ ռազմավարական գործընկեր ունենալ: Մեր գործընկերները շատ լաւ հասկանում են մեր արտաքին քաղաքական առաջնահերթութիւնները եւ գործողութիւնների տրամաբանութիւնը: Մենք բաց ու հրապարակային ենք եղել ինչպէս ԵՄ-ի, այնպէս էլ ԱՄՆ-ի հետ, հետեւաբար մեր որոշման պատճառները նրանց յայտնի են: Այլ հարց է, որ կան քաղաքական ուժեր, որոնք յայտարարում են, որ պէտք է նախապատուութիւնը տալ եւրոպական, ոչ թէ եւրասիական ինտեգրմանը: Կարելի է տասնեակ կողմ կամ դէմ փաստարկներ բերել, բայց մեր նպատակն է շարունակել այդ գործընթացները»,- ըսած է վարչապետը:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԵԼՔԵՐ ԵՆ ՓՆՏՌՈՒՄ

*ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ*

Ղարաբաղեան պատերազմի մի խումբ ազատամարտիկներ կլոր սեղան էին կազմակերպել, որպէսզի քննարկեն Հայաստանի վիճակն ու այդ վիճակից դուրս գալու ելքեր գտնեն: Զգտան: Փոխարէնը՝ որոշեցին շարունակել որոնումները:

Ելքեր գտնելն իսկապէս դժուար է: Եթէ խնդիրն ընդամէնը ազատամարտիկների սոցիալական վիճակն է, ապա ինչ-որ լուծում, իհարկէ, կարելի է գտնել՝ իշխանութիւններն ինչ-որ տեղից փող կը ճարեն ու թեման կը փակեն: Բայց ազատամարտիկները, վստահաբար, միայն իրենց սոցիալական վիճակի մասին չեն մտածում: Միայն իրենց մասին մտածող լինէին՝ ժամանակին կամաւոր չէին մասնակցի պատերազմին: Նրանց ամենայն հաւանականութեամբ մտահոգում է ամբողջ ժողովրդի սոցիալական վիճակը, իսկ դա արդէն հեշտ լուծուող հարց չէ: Հայաստանի բնակչութեան 80-85 տոկոսը հազիւ է ծայրը ծայրին հասցնում, եւ որպէսզի ինչ-որ բան փոխուի՝ աշխատավարձերը, թոշակներն ու նպաստները պիտի առնուազն կրկնակի բարձրանան: Բայց՝ այնպէս, որ սպառողական ապրանքների գները մնան նոյնը: Եթէ այս պայմանը չլինէր, իշխանութիւնները հեշտութեամբ կը լուծէին հարցը. փող տպող մեքենան «փող կը տային» եւ թոշակներն ու նպաստները միանգամից կը բարձրացնէին՝ ինչքան պէտք է (թէեւ արդիւնքում ոչինչ չէր փոխուի՝ մարդկանց կենսամակարդակը կը մնար նոյնը): Այսինքն՝ խնդիրը հետեւեալն է. պէտք է աշխատավարձերն ու թոշակները բարձրացնել առանց փողի ընդհանուր ծաւալը մեծացնելու:

> ժամանակին կամաւոր չէին մասնակցի պատերազմին: Նրանց ամենայն հաւանականութեամբ մտահոգում է ամբողջ ժողովրդի սոցիալական վիճակը, իսկ դա արդէն հեշտ լուծուող հարց չէ

Իսկ դա նշանակում է, որ պէտք է Հայաստանում շրջանառուող փողի զանգուածի զգալի մասը ինչ-որ ձեւով վերցնել 40-50 մուլտիմիլիոնատէր ընտանիքներից եւ դրանով էլ բարձրացնել աշխատավարձերն ու թոշակները: Իսկ այդ 40-50 ընտանիքները հենց Հայաստանի իշխանական համակարգի առանցքային դէմքերն են, եւ բնականաբար՝ կամովին չեն հրաժարուի իրենց ունեցուածքից: Սա էլ իր հերթին նշանակում է, որ առաջին հայեացքից սոցիալական թուացող խնդիրն իրականում քաղաքական է, այսինքն՝ կարող է լուծում ստանալ միայն քաղաքական զարգացումների (աւելի կոնկրետ՝ իշխանափոխութեան) դէպքում: Բայց արի ու տես, որ տրամաբանական այս շղթան ոչ բոլորի համար է ընդունելի. մինչեւ հիմա էլ գտնւում են մարդիկ՝ «Ովքեր ցանկանում են քաղաքականացնել իրենց պայքարը»: Իշխանական թերթերից մէկն էլ ճիշդ ժամանակին սպառնում է, թէ տեսէք՝ ձերոնցից մէկը քաղաքականացրեց պայքարը ու յայտնուեց բանտում: Ակնարկը պարզ է՝ «խելօք պահէք ձեզ»:

Բայց վերադառնանք ելքեր գտնելու փորձերին: Նախ՝ եթէ ազատամարտիկները փորձեն միայնակ հասնել իրենց խնդիրների լուծմանը, ոչինչ չի ստացուի: Նրանք չափազանց փոքրաթիւ են: Երկրորդ՝ այնպէս չէ, որ ղարաբաղեան պատերազմին մասնակցած լինելն արդէն իսկ խօսում է այդ մարդկանց բացառիկ ազնուութեան ու սկզբունքայնութեան մասին: Գեներալ Մանուէլն ու Սէյրանն էլ են մասնակցել պատերազմին, Բուռնաշն ու Շմայսն էլ (իրենց ասելով), եւ ի՞նչ: Միւս կողմից էլ՝ Հայաստանում տասնեակ հազարաւոր մարդիկ կան (հիմնականում՝ երիտասարդներ), ովքեր պատերազմին չեն մասնակցել, բայց այսօր պատրաստ են պայքարել այս յանցաւոր համակարգի դէմ: Այսինքն՝ սա չի կարող միայն նախկին ազատամարտիկների պայքար լինել, սա կարող է լինել համաժողովրդական պայքար, որի առաջին շարքերում ազատամարտիկներն են:

Հիմա՝ քաղաքական ուժերի հետ համագործակցելու մասին: Իշխանութիւններին ակնյայտօրէն ամենաշատը հենց այս հեռանկարն է մտահոգում (յիշենք թէկուզ գեներալ Մանուէլի նեարդային արձագանքը կամ գնդապետ Վոլոդիա Աւետիսեանի կալանքի փաստը): Բայց քաղաքական ուժերի հետ համագործակցելուց առաջ ազատամարտիկներն այնուամենայնիւ պիտի յստակեցնեն, թէ ո՞րն է իրենց նպատակը, եւ ըստ այդմ էլ՝ համագործակցեն այս կամ այն ուժի հետ: Եթէ նպատակը միայն ազատամարտիկների սոցիալական վիճակը բարելաւելն է՝ պիտի համագործակցեն ՀՀԿ-ի հետ (երեւի մի բան կ՚անեն), եթէ նպատակը միայն շարժման ղեկավար կազմի հետ նեղ շրջանակի սոցիալական վիճակի բարելաւումն է՝ պիտի հանդիպեն ՕԵԿ-ի կամ Արտաշէս Գեղամեանի հետ (նրանք ձեւերը կ՚ասեն), եթէ նպատակը երկիրն այս վիճակից դուրս բերելն է՝ պիտի համագործակցեն այն ուժերի հետ, որոնք իշխանափոխութիւն են պահանջում:

Դատելով վերջին զարգացումներից՝ ազատամարտիկները հենց այս երրորդ ճանապարհն են ընտրել: Եւ շատ ճիշդ են վարուել. բնակչութեան առնուազն 80 տոկոսի աջակցութիւնն ապահովուած է: Այլ հարց է՝ հնարաւոր կը լինի՞ իրացնել այդ աջակցութիւնը, թէ ոչ: Բայց կարեւորը՝ նպատակն արդէն յստակ է: Իսկ ելք գտնել հնարաւոր է ցանկացած իրավիճակից: Կարեւորը ելք գտնելու անհրաժեշտութեան գիտակցումն է:

*«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»*

# ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻՆ ԱՅԼ ԻՆՔՆԱԹԻՌ ԵՆ ՆՍՏԵՑՐԵԼ

*ՀԱՅԿ ԱՐԱՄԵԱՆ*

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդուարդ Նալբանդեանի համար նոր հեռանկարներ են բացւում, եւ այս շրջանը լինելու է նրա դիւանագիտական կարիերայի ամենափայլուն շրջանը: Եւ ահա թէ ինչու:

Էդուարդ Նալբանդեանը, գլխաւորելով Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը, աչքի ընկաւ աննախադէպ ակտիւութեամբ: Նա գրեթէ Երեւանում չէր լինում, դա բացատրելով նրանով, որ պէտք է Հայաստանը հանել միջազգային պասիւ իրավիճակից եւ աշխատել բոլոր ուղղութիւններով: Նալբանդեանը լինում է ամենաէկզոտիկ (ամենատարօրինակ) երկրներում, դեսպանատներ է բացում, ընդունում նոր դեսպանների: ԱԳՆ տարեկան հաշուետուութիւններում նշւում էին այցերի ու տուած հարցազրոյցների թիւը, որոնցով ԱԳՆ ղեկավարն ընդգծում էր իր տարբերութիւնը նախորդ նախարարներից:

Այս ամէնի գագաթնակէտը Եւրամիութեան հետ գրեթէ 4 տարի տեւած բանակցութիւններն էին Եւրոպական միութեան հետ Ասոցիացման վերաբերեալ, որոնք փաստօրէն տապալուեցին Սեպտեմբերի 3-ին:

Նմանապէս, կարելի է տապալուած համարել Նալբանդեանի նախորդ շրջանի ողջ ակտիւութիւնը, նկատի առնելով թէ այն, որ հակահայկական բնոյթի բանաձեւերի ու այլ կարգի փաստաթղթերի պակաս չէր զգացւում, եւ թէ այն, որ ի վերջոյ Հայաստանի մեկուսացման յաղթահարման գլխաւոր փաստարկն ու միջոցը լինելու էր Եւրամիութեան հետ Հայաստանի ասոցիացիայի նախաստորագրումը:

Նալբանդեանի ակտիւութիւնը մի կողմ թողնելով, պէտք է նկատի առնել հետեւեալ հանգամանքը: Մինչ նրա նշանակումը, թէեւ Հայաստանն այնուամենայնիւ գտնւում էր Ռուսաստանի ազդեցութեան ներքոյ, սակայն յատկապէս ԱԳ նախարարութեան եւ դրա տարբեր տարիների ղեկավարների միջոցով պահպանւում էր որոշակի ներքին ու արտաքին «հաւասարակշռութիւն»: Այն իմաստով, որ ԱԳՆ-ն այնուամենայնիւ ամբողջութեամբ չէր գտնւում Ռուսաստանի արտաքին քաղաքականութեան «ծիրում» եւ ունէր տեղեկատուական եւ այլ բնոյթի որոշակի «դիւերսիֆիկացիայի» բնոյթ:

Այսինքն, Հայաստանի ուժային բլոկը գտնւում էր Ռուսաստանի ազդեցութեան ներքոյ, սակայն արտաքին քաղաքական գերատեսչութեան միջոցով ապահովւում էր այդ հաւասարակշռութիւնը:

Նալբանդեանի նշանակումից յետոյ այս «հաւասարակշռութիւնը» որոշակիօրէն խախտուեց. Հայաստանը զարմանալի կերպով, չնայեած նախարարի ակտիւութեանը յատկապէս արեւմտեան ուղղութեամբ, աստիճանաբար յայտնուեց ռուսական «ծիրում»: Կան տեղեկութիւններ, ըստ որոնց՝ առաջատար երկրների հայկական դեսպանատների այս կամ այն կցորդներն անգամ տեղեկատուութիւն էին փոխանցում Ռուսաստանի դեսպանատներին, «երրորդ» կողմի միջոցով (թէ ինչու ուղղակի չէին փոխանցում՝ անհասկանալի է): Այսպիսով, ԱԳՆ-ն փաստացի զրկւում էր տեղեկատուական եւ այլ բնոյթի «դիւերսիաֆիկցիայի» հնարաւորութիւնից:

Սեպտեմբերի 3-ից յետոյ Հայաստանն աստիճանաբար յայտնւում է միջազգային մեկուսացման մէջ: Ներկայում արդէն Հայաստանի եւ հայկական խնդիրների վերաբերեալ հարցերը լուծուելու են ոչ Հայաստանի հետ: Հայաստանը որպէս պետութիւն ոչ միայն կորցրեց իր արտաքին վարկը, այլեւ յայտնուել է նուաստացուցիչ իրավիճակում: Սա արդէն նկատելի է:

Ճիշդ է, պաշտօնական մակարդակում կը պահպանուի դիւանագիտական էթիկետը(վարքուբարքը): Հենց այս իմաստով, եկել է Նալբանդեանի դիւանագիտական կարիերայի (գրաւած պաշտօն) ամենալաւ շրջանը: Նա կը շարունակի իր անթիւ-անհամար այցերն ու շրջագայութիւնները, բայց արդէն առանց որեւէ պատասխանատուութեան: Նախկինում դատարկութիւն էր՝ շղարշուած լուրջ խնդիրների մի ողջ փաթեթով, ներկայում պարզապէս դատարկութիւն է՝ խնդիրները եւ ըստ այդմ՝ պատասխանատուութիւնը չկան, մնում են շրջագայութիւնները՝ դիւանագիտական կեղծ ժպիտների ու էթիկետի պահպանմամբ:

*«ԼՐԱԳԻՐ»*

www.massisweekly.com

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $80.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Ազատամարտիկները գոհ են քաղաքական կուսակցութիւնների հետ հանդիպումից

Իշխանութիւններին քաղաքական պահանջներ ներկայացնող ազատամարտիկների հրաւիրած քննարկմանն մասնակցել մէկ տասնեակից աւելի կուսակցութիւններ, այդ թւում՝ «Բարգաւաճ Հայաստանը», «Ժառանգութիւնը» ու Հայ ազգային կոնգրէսը:

Աւելի քան երկու ամիս Ազատութեան հրապարակում ամէն Հինգշաբթի հանրահաւաքներ անցկացնող ազատամարտիկները դեռեւս շաբաթներ առաջ հանդիպումներ էին ունեցել քաղաքական ուժերի ղեկավարների հետ, որոնք էլ համաձայնել էին նստել կլոր սեղանի շուրջ ու քննարկել ազատամարտիկների բնորոշմամբ երկիրը կործանման տանող հարցերն ու հանգել որեւէ լուծման: Ազատամարտիկների այս թեւը յայտարարել է, որ եթէ իշխանութիւնները չդադարեցնեն երկիրը կործանման տանելու գործողութիւնները, իրենք իշխանափոխութեան գործընթաց կը նախաձեռնեն:

«Ազատամարտիկները քաղաքական միաւոր չեն: Սա իրենք կազմակերպել են, որպէսզի քաղաքական ուժերը իրար հետ նստեն կլոր սեղանի շուրջ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում մեկնաբանեց ՀԱԿ ներկայացուցիչ Սամուէլ Աբրահամեանը: Մեր հարցին՝ հնարաւոր կը լինի՞ յաջորդ հանդիպումների ընթացքում գալ ինչ-որ մի եզրահանգման, ՀԱԿ ներկայացուցիչը արձագանքեց, - «Ես այն կարծիքին եմ՝ միշտ էլ հնարաւոր է գալ եզրահանգման եւ գտնել ուղիներ երկիրը այս աղէտալի վիճակից հանելու համար»:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը առայժմ չի շտապում յայտարարել ազատամարտիկների ներկայացրած պահանջներին միանալու մասին:

Քննարկմանը մասնակցող՝ կուսակցութեան խօսնակ Տիգրան Ուրիխանեանն «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, որ առաջին հանդիպմանը իրենք ընդամէնը ներկայացրեցին իրենց կարծիքը Հայաստանում տիրող իրավիճակի վերաբերեալ: Հարցին, թէ համաձայնելով ազատամարտիկների հետ կլոր սեղանի շուրջ քննարկել երկրի խնդիրները՝ հնարաւոր համարո՞ւմ են նրանց հետ հետագայում իշխանափոխութեան գործընթաց սկսելը, Ուրիխանեանն այսպէս արձագանքեց, - «Ես որեւէ պահանջ չեմ լսել այս պահի դրութեամբ, բացի երկրում վիճակը գնահատելու խնդրանքից կլոր սեղանի ֆորմատի շրջանակներում, ինչն էլ սիրով իրականացրեցի»:

Հանդիպումից ազատամարտիկները գոհ էին: Յայտարարեցին, թէ յաջորդ կլոր սեղանի շուրջ արդէն կը քննարկեն՝ «Հայաստանը կործանումից փրկելու ելքերը»:

# ՀՀԿ խօսնակ. Նախագահը տեղեակ չի եղել Զորի Բալաեանի նամակից

Իշխող Հանրապետական կուսակցութեան մամուլի խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը յայտարարում է՝ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը տեղեակ չի եղել, որ հրապարակախօս Զորի Բալաեանը նամակ է յղել Ռուսաստանի նախագահին:

Բալաեանը օրեր առաջ բաց նամակ էր յղել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինին, որի պատճառով խիստ քննադատութեան ենթարկուեց Հայաստանում:

Հրապարակախօսը Ռուսաստանի նախագահին եւ ողջ ռուս ժողովրդին յիշեցնում էր, որ Գիւլիստանի պայմանագրով Ղարաբաղը ռուսական կայսրութեան մաս էր կազմում, նշում նաեւ, որ այդ պայմանագիրը կնքուել է «յաւերժական ժամանակների համար»:

«Իրօք, չկայ Ղարաբաղի խնդիր, կայ Ռուսաստանի խնդիր»,- գրում է Ղարաբաղի անկախութեան համար ժամանակին պայքարած գրողը:

Շարմազանովի խօսքով՝ Բալաեանի նամակում զետեղուած մտքերը նրա կարծիքն ու տեսակէտն է, եւ որ այդ նամակում իրականում Հայաստանի շահերին հակասող որեւէ տեղեկութիւն կամ տեսակէտ չկայ:

«Պարզապէս ինձ մօտ այնպիսի տպաւորութիւն է, որ մեր հասարակութեան շատ ներկայացուցիչներ, ովքեր փորձեր կատարեցին մեկնաբանութեամբ հանդէս գալու, ուղղակի ուշադիր չէին կարդացել այդ նամակն ամբողջութեամբ»,- ասաց Շարմազանովը:

Շարունակելով՝ ՀՀԿ ներկայացուցիչն ասում է, որ դեռ աւելին, Բալաեանը պատմական ճշմարտութիւններ է գրել՝ Հայաստանն ամենեւին էլ չհամարելով Ռուսաստանի մաս:



Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

«Ես նման բան չեմ կարդացել, Հայաստանը Հայաստանն է, Արցախն էլ Հայաստանի մի մասն է, Արցախը Հայաստան է եւ վերջ»,- ասաց նա:

ՀՀԿ մամուլի խօսնակը անդրադարձաւ նաեւ ընդդիմադիր «Ժառանգութեան» ներկայացուցիչ Զարուհի Փոստանջեանի հարցին: Պատգամաւորը արդէն քանի օր է շրջում է ոստիկանների ուղեկցութեամբ՝ պաշտպանուելով նաեւ հանրապետական որոշ պատգամաւորների յարձակումներից:

Հայաստանի նախագահին ուղղուած Փոստանջեանի՝ յայտնի կազինոյի մասին հարցից յետոյ մի շարք հանրապետական պատգամաւորներ հայհոյախառն յայտարարութիւններ հնչեցրեցին ընդդիմադիր պատգամաւորի հասցէին:

Շարմազանովի կարծիքով՝ նրանք իրենց տեսակէտներն են յայտնել, ինչի իրաւունքը ունեն.- «Մեր կուսակիցները ներկայացրել են իրենց կարծիքը, կարող է մի քիչ զգացմունքային են եղել, բայց մարդիկ իրաւունք ունեն իրենց կարծիքն արտայայտելու: Եւ ես կարծում եմ, որ մենք չպէտք է վատնենք մեր եւ ձեր թանկագին ժամանակը:

# Զարուհի Փոստանջեանը «Ժառանգութիւն» խմբակցութեան նոր ղեկավար

Զարուհի Փոստանջեանն միաձայն ընտրուեց «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար:

Խմբակցութեան արդէն նախկին ղեկավար Ռուբէն Յակոբեանն անսպասելիօրէն յայտարարեց, թէ այլեւս չի ցանկանում լինել այդ պաշտօնում՝ խուսափելով ներկայացնել հրաժարականի պատճառները:

Նկատենք, սակայն, որ Ռուբէն Յակոբեանը ոչ միանշանակ դիրքորոշում էր արտայայտել Փոստանջեանի՝ կազինոյի մասին հարցի շուրջ՝ ասելով, թէ ինքը նախագահին նման հարց չէր տայ: Փոստանջեանն էլ հակադարձել էր, թէ ինքն ու Յակոբեանը տարբեր սերունդների ներկայացուցիչներ են: Ոմանց պնդմամբ՝ Ռուբէն Յակոբեանի հրաժարականը անմիջականօրէն կապ ունի նաեւ այս միջադէպի հետ:

«Ես դիմել եմ, խնդրել եմ, Րաֆֆի Յովհաննիսեանը տեղեակ էր այդ մասին վաղուց, խնդրել եմ, որ յարգեն իմ ցանկութիւնը: Իհարկէ, Րաֆֆին ցանկանում էր, որ ես շարունակէի մնալ այդ պաշտօնում, բայց որովհետեւ շատ դեմոկրատ անձնաւորութիւն է՝ ի վերջոյ թողեց ինձ, որպէսզի ես որոշեմ այդ հարցը», - ասաց պատգամաւորը:



Պատգամաւոր Ռուբէն Յակոբեան

«Ես վաղուց էի որոշել, մինչեւ Զարուհի Փոստանջեանի հարցադրումը: Ես էն տեսակը չեմ, որ ինձ կարող են խանգարել կամ պարտադրել ինչ-որ բան: Ես ասացի՝ դա շատ անձնական որոշում է, ես չեմ պայմանաւորում դա որեւէ ներքին խնդրով, ուղղակի ցանկայ, որ այլեւս չլինեմ ղեկավար խմբակցութիւնում: Ես լուրջ պատճառ չեմ տեսնում, ուղղակի իմ ցանկութիւնն էր դա եւ վերջ»,- յաւելեց Յակոբեանը:

Նշենք, որ ինչպէս պնդում էին ժառանգականները, Յակոբեանի այս որոշումը անսպասելի է եղել նաեւ իրենց համար: Մասնաւորապէս, կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը անկեղծօրէն ասաց, թէ այսօր լրագրողներից է իմացել, որ Յակոբեանը ցանկանում է հրաժարական տալ, եւ դրա համար անձամբ եկել է խորհրդարան, որպէսզի հասկանայ, թէ ինչ է կատարւում:

Մարտիրոսեանը պնդում էր, թէ Յակոբեանի հրաժարականը քաղաքական չէ, կուսակցական չէ, հակառակ դէպքում՝ իրենք այդ մասին տեղեակ կը լինէին:

# ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆԵԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի գրողների միութեան արտահերթ համագումարում միութեան նախագահ ընտրուեց, բանաստեղծ, արձակագիր, Հայաստանի ազգային գրահրատարակչական գործակալութեան տնօրէն Էդուարդ Միլիտոնեանը: Փակ գաղտնի քուէարկութեան արդիւնքներով նա ստացաւ 199 ձայն:

Միութեան նախագահի միւս թեկնածուներից բանաստեղծ, ժողովրդական արուեստի թանգարանի տնօրէն, Մշակոյթի նախկին նախարար Հովիկ Յովէեանը ստացաւ 100 ձայն, արձակագիր, Հայաստանի ազգային գրադարանի երկարամեայ տնօրէն Դաւիթ Սարգսեանը՝ 24, իսկ բանաստեղծ Ռոմիկ Սարդարեանը՝ 4 ձայն:

Համագումարը սկսուեց շատ բուռն, լարուած կրքերի մթնոլորտում: Ձեռնամարտի, իհարկէ, չհասան, բայց պատուիրակներից մի քանիսի նեարդերը տեղի տուեցին: Բանաստեղծ Աշոտ Խաչատրեանին, օրինակ, զարմացրել էր, որ համագումարի նախագահութիւնում տեղ էր գտել գրականագէտ Աւիկ Իսահակեանը, նրան մի քանի անգամ հեռացրեցին դահլիճից: Կամ պարզուեց, որ համագումարը քարտուղարութիւն չի ընտրել՝ ինչին հետեւեցին վէճերը, թէ ովքեր պիտի զբաղուեն սղագրութեամբ կամ արդեօք անհրաժեշտ է սղագրութիւնը, եթէ բոլոր ելոյթները ձայնագրւում ու տեսագրւում են:

Էդուարդ Միլիտոնեանի ստացած 199 ձայներից 40-ը Հայաստանի գրողների միութեան սփիւռքահայ անդամների ձայներն էին: Հենց Սփիւռքի ձայների պատճառով էլ բաւական լուրջ անախորժութիւններ տեղի ունեցան համագումարի ընթացքում:



Հայաստանի գրողների միութեան նորընտիր նախագահ Էդուարդ Միլիտոնեան

Այս տարի ամռանը կայացած վերջին համագումարի ժամանակ կանոնադրական փոփոխութիւններ էին կատարուել՝ ներառուել էր սփիւռքահայ գրողներին Հայաստանի գրողների միութեան լիիրաւ անդամ դարձնելու հարցը:

Գրողների միութեան անդամների մի մասը, մինչդեռ, գտնում էր, որ սփիւռքահայ գրողները իրաւունք չունեն քուէ տալու: Ծնունդով լիբանանահայ, վերջին տարիներին Երեւանում ապրող բանաստեղծ Սաքօ Արեանը ամբիոնից յայտարարեց, որ քուէարկութեան իրաւունք պէտք է ունենան միայն համագումարին ներկայ գտնուող սփիւռքահայ գրողները, իսկ հեռակայ քուէարկութիւնն անընդունելի է:

Այդուհանդերձ, սփիւռքահայ գրողների ձայները չհաշուելու դէպքում էլ Էդուարդ Միլիտոնեանը, ըստ քուէարկութեան արդիւնքների, համոզիչ առաւելութիւն ունէր իր մրցակիցներ Յովիկ Յովէեանի, Դաւիթ Սարգսեանի եւ Ռոմիկ Սարդարեանի նկատմամբ:

# ԼՈՒՐԵՐ

## ԵՄ-ն մտադիր չէ նախաձեռնել Ասոցացման համաձայնագրի վերաշարադրումը

Եւրամիութեան Արեւելեան հարեւանութեան ծրագրի գլխաւոր բանագնաց Գունար Վիգանդն Երեւանում յայտարարեց, որ Մաքսային միութեանն անդամակցելու որոշումը կայացրել են Հայաստանի իշխանութիւնները, ուստի նրանց հայեցողութեանն է մնում՝ փորձել Ասոցացման համաձայնագիրը համապատասխանեցնել ստեղծուած նոր իրավիճակին:

«Մենք երեքուկէս տարի շատ հիանալի համագործակցութիւն ենք ունեցել ձեր իշխանութիւնների հետ, կայ պատրաստի փաստաթուղթ եւ մենք Վիլնիւսից յետոյ պէտք է ուշադրութեամբ դիտարկենք, թէ այս համաձայնագրերի ո՞ր մասերը կարող են հիմք դառնալ հետագայ յարաբերութիւնների համար: Այլեւս չենք կարող առաջ գնալ բանակցուած խորը եւ համապարփակ ազատ առեւտրի համաձայնագրով՝ Հայաստանի Մաքսային Միութեանն անդամակցելու որոշումից յետոյ», - նշեց դիւանագէտը:

Մինչդեռ Հայաստանի էկոնոմիկայի նախարար Վահրամ Աւանէսեանը յոյս է յայտնում, որ այնուամենայնիւ Երեւանին կը յաջողուի որեւէ փաստաթուղթ ստորագրել Վիլնիւսի գագաթաժողովում: Նախարարը չմանրամասնեց խօսքը ի՞նչ ձեւաչափի մասին է՝ Ասոցացման համաձայնագրի՞, թէ՞ որեւէ քաղաքական յայտարարութեան:

«Մենք գործընկերների հետ այն հատուածները, որոնք հասել ենք, այն բարեփոխումները, որոնք իրականացուել են Եւրամիութեան աջակցութեամբ, այդ բազայի վրայ ստեղծուելու է այն փաստաթուղթը, որը նախագծելու է մեր ապագայ գործունէութեան եւ համագործակցութեան շրջանակը», - նշեց նա:

Վահրամ Աւանէսեանն ու Գունար Վիգանդը մասնակցում էին Հայաստան-Եւրամիութիւն համագործակցութեան կոմիտէի հերթական նիստին: Եւրոպացի դիւանագէտը չէշտում էր, որ Բրիւսելը հաւատարիմ է Հայաստանի հետ սերտ յարաբերութիւններին եւ պատրաստ է աջակցել այստեղ իրականացուող բարեփոխումների ջանքերին, սակայն դրա հիմքում այսուհետեւ պէտք է հաշուի առնուի Հայաստանի որոշումը՝ միանալ Ռուսաստանի նախաձեռնած Մաքսային միութեանը:

«Շատ իւրայատուկ շրջան է՝ Վիլնիւսի գագաթնաժողովից շաբաթներ առաջ, եւ մենք պէտք է ուշադրութեամբ ուսումնասիրենք հնարաւորութիւնները, թէ ինչպէս կարող ենք օգտագործել համաձայնագրերի այն մասերը, որոնք արդէն բանակցել ենք՝ հաշուի առնելով այն որոշումը, որ կայացուել է Հայաստանի կողմից Մաքսային Միութեանն անդամակցելու վերաբերեալ: Մենք կը դիտարկենք բոլոր այս ոլորտները, սա այսօրուայ քննարկման հարց չէ, սա պէտք է արուի Վիլնիւսից յետոյ՝ հաշուի նստելով բոլոր մանրամասների հետ: Մենք հաւատարիմ ենք Հայաստանի հետ սերտ համագործակցութեանը, ուզում ենք լիովին պահպանել կապերը եւ աջակցել բարեփոխումներին», - ասում էր Գունար Վիգանդը:

## ԳՆԴԱԿՈԾՈՒԵԼ Է ԲԵՐԴ - ԻՋԵՒԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ, ՄԵԿ ԶԻՆՈՒՈՐ ԶՈՀՈՒԵԼ Է, ԵՐԵՔԸ՝ ՎԻՐԱՒՈՐՈՒԵԼ

Տաւուշի մարզի Վազաշէն-Պառաւաքար հատուածը մօտ 18 կմ երկարութեամբ փակ է: Այստեղ հսկողութիւն են իրականացնում ռազմական ոստիկանութեան աշխատակիցները:

Հոկտեմբերի 22-ին հակառակորդի արձակած գնդակներից վիրաւորուած երեք ժամկէտային զինծառայողները առաջին բուժօգնութիւնը ստացել էին Իջեւանի բժշկական կենտրոնում, այնուհետեւ տեղափոխուել էին զինուորական հոսպիտալ:

Իջեւանում բժշկական կենտրոնի վիրաբոյժ Հռիփսիմէ Ղլուճեանը «Ազատութեանը» փոխանցեց, որ զինուորականներից ոեւէ մէկին վտանգ չի սպառնում:

Բերդ - Իջեւան աւտոճանապարհի Պառաւաքարի հատուածում հակառակորդը կրակ էր բացել աւտոճանապարհով ընթացող մեքենաների վրայ, կրակահերթից տուժել են ինչպէս քաղաքացիական, այնպէս էլ զինուորական մեքենաներում եղած անձինք, փոխանցում է Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութիւնը:

Նոյն աղբիւրի փոխանցմամբ՝ զինծառայողներին մարտական հերթապահութեան տեղափոխող զինուորական մեքենաների շարասեան վրայ բացուած կրակի հետեւանքով զոհուել է 19-ամեայ ժամկէտային զինծառայող, շարքային Գարիկ Պօղոսեանը, հրազէնային տարբեր աստիճանի վիրաւորումներ են ստացել նրա հասակակից ժամկէտային զինծառայողներ, շարքայիններ Արթուր Անդրանիկեանը, Արայիկ Ժամհարեանը եւ Մարտին Պետրոսեանը:

Դէպքի մասին համապատասխան իրազեկում կատարուել է ԵԱՀԿ-ի յատուկ ներկայացուցիչ Անջէյ Կասպշիկի գրասենեակին:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարում է, որ «հակառակորդի այս յանցաւոր քայլը անպատասխան չի մնայ եւ հերթական անգամ այս սադրանքի պատասխանատուութիւնը կը մնայ սանձազերծողի վրայ»:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

## Հայաստանը ազատականացնում է աւիափոխադրումների ոլորտը




Նորաստեղծ «էյր Արմենիա»-ի մարդատար ինքնաթիռի առաջին վայրէջքը «Զուարթնոց» օդանաւակայանը՝ Հոկտեմբեր 23-ին

Ամերիկեան «Մակքինզի ընդ քոմփանի» խորհրդատուական ընկերութեան անցած երեք ամիսների ուսումնասիրութիւնների արդիւնքում Հայաստանի կառավարութիւնը որոշեց անմիջապէս ընդունել «բաց երկնքի» քաղաքականութիւն: Հայաստանեան աւիաոլորտը այսուհետ բաց կը լինի միջազգային չափանիշներին համապատասխանող բոլոր աւիաընկերութիւնների համար՝ առանց որեւէ խտրականութեան:

Ըստ վարչապետ Տիգրան Սարգսեանի՝ ոլորտի ազատականացումը կը նպաստի տնտեսութեան զարգացմանն ու գների նուազմանը:

«Ստեղծելու է նոր աշխատատեղեր, դարձնելու է ուղեւորափոխադրումները յարմարաւէտ, եւ գները նուազելու են»,- ասաց վարչապետը:

Կառավարութիւնը միաժամանակ զգուշացնում է, որ ակնկալուող դրական արդիւնքները տեսանելի կը լինեն 1-2 տարի անց միայն: Բարեփոխումների իրականացումը ժամանակ է պահանջում՝ փաստում է էկոնոմիկայի նախարար Վահրամ Աւանէսեանը, ում խօսքով՝ գները միջինում կը նուազեն 10 տոկոսով, փոխադրումները կ՚աւելանան 20-25 տոկոսով:

«Իհարկէ, որոշակի ուղղութիւնների վրայ կարող ենք ունենալ աւելի արագ արձագանք: Դա յատկապէս վերաբերում է տոմսերի գներին: Ընդհանուր առմամբ՝ գնահատականները հետեւեալն են, որ միջնաժամկէտ, երկարաժամկէտ հեռանկարում սա կարող է հանգեցնել 1-2 տոկոս տնտեսական աճի: Հիմնականում դա վերաբերում է զբօսաշրջութեան եւ ներդրումային գրաւչութեան աւելացմանը Հայաստանում»,- ասաց նախարարը:

Ընդամէնը երեք ամիս առաջ կառավարութիւնը մէկ այլ փաստաթուղթ ընդունեց ոլորտի վերաբերեալ, որով որոշեց անցնել «երկնքի» փուլ առ փուլ ազատականացման: Կառավարութիւնն անգամ պատճառաբանել էր՝ քանի դեռ չունենք հայկական աւիափոխադրող, նպատակայարմար չէ ազատականացնել ոլորտը, քանի որ այդ դէպքում Հայաստանի ուղեւորափոխադրումների իրականացումը կախուած կը լինի օտարերկրեայ ընկերութիւններից: Այսօրուայ որոշմամբ, փաստօրէն, գործադիրը վերանայում է իր մօտեցումները:

## Հայկական գորգի ցուցադրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

կրնան ներկայացնել Եդեմական այգին, որ այնքան հեռու էր 1915-ի սարսափելի իրադարձութիւններէն, երբ կործանուող ու ծերացած Օսմանեան կայսրութիւնը սկսաւ հայ բնակչութեան կոտորածը: 1-1,5 միլիոն մարդ սպաննուեցան կամ մահացան սովէն, իսկ միւսները ստիպուած եղան լքել իրենց տուները: Այս գործողութիւնները այժմ կը նկատուին ցեղասպանութիւն: Շատերը ծնողազուրկ դարձան, որոնց շարքին նաեւ աւելի քան 100 հազար երեխաներ, որոնց կ՚աջակցէր Մերձաւոր Արեւելքը հովանաւորող ամերիկեան կազմակերպութիւնը: Անոնց շարքին էին գորգը գործող աղջիկները: Այն պատրաստուած է Ղազիր քաղաքին մէջ, որ այժմ Լիբանան մէջ է, ի շնորհակալութիւն Միացեալ Նահանգներուն՝ ցեղասպանութեան ժամանակ հայերուն ցուցաբերած օգնութեան համար:

Յոյս կար, որ 20 տարի պահեստարանի մէջ գտնուող գորգը Դեկտեմբեր 16-ին կրնար ցուցադրուիլ ամերիկեան «Սմիթսոնլըն» պատմութեան թանգարանին մէջ կազմակերպուելիք ձեռնարկի ընթացքին, երբ պիտի ներկայացուէր Ցակոբ-Մարտին Տերանեանի՝ «Նախագահ Քալվին Քուլիճն եւ Հայ Որբերու Գորգը» գիրքը: Սակայն գիտնականը, որ կը կազմակերպէր այս միջոցառումը, չեղեալ յայտարարած է զայն՝ պատճառաբանելով Սպիտակ Տան մերժումը:

Միացեալ Նահանգներու մէջ գործող երկու հայկական կազմակերպութիւններուն ուղղուած նամակին մէջ, Թանգարանի ասիական մշակութային պատմութեան ծրագիրի տնօրէն Փոլ Մայքլ Թէյլըր Սպիտակ Տան մերժման որեւէ բացատրութիւն չէ ներկայացուցած, միայն յայտնելով, որ Հայաստանի մօտ Ամերիկայի դեսպան Ճոն Հեֆերնի ջանքերը եւս ապարդիւն եղած են:

Ոչ Արա Ղազարեանցը Հայկական Մշակութային Հիմնադրամէն, ոչ ալ Լեւոն Տէր-Պետրոսեանը Հայ Գորգագործներու Միութենէն վստահ չեն, եթէ ցուցադրութիւնը չեղեալ յայտարարուած է քաղաքական դրդապատճառներով՝ Թրքական արձագանքէն խուսափելու համար: Սակայն երկուքն ալ անհաւանական չեն նկատած այս հանգամանքը:

## »Եկեղեցի եւ պետութիւն փոխյարաբերութիւններ. իրամայականներ եւ մարտահրաւէրներ« թեմայով միջազգային գիտաժողովը ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ




Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարուած՝ Եկեղեցի եւ պետութիւն փոխյարաբերութիւններ. հրամայականներ եւ մարտահրաւէրներ խորագրով միջազգային գիտաժողովը հոկտեմբերի 19-ին աւարտեց իր աշխատանքները:

Երկօրեայ գիտաժողովի ընթացքում՝ Եկեղեցի եւ պետութիւն փոխյարաբերութիւնների տարբեր մոդելներն այսօրերի թեմայի շուրջ բանախօսեցին Սերգէյ քահանայ Մաուիչինը (Ռուս Ուղղափառ եկեղեցի) եւ Ասատուր Նահապետեանը (Երեւանի Հայ աւետարանական-մկրտական քրիստոնեաների եկեղեցի): Կրօնական ազատութեան բնագաւառում՝ միջազգային օրէնքներն ու չափորոշիչները թեմայի շուրջ զեկոյցներով հանդէս եկան դոկտոր Պետեր Կրոմերը (Աւստրիայի Աւետարանական եկեղեցու ղեկավար), մագ. Էլիզաբետայ Կիտանովիչը (Եւրոպական եկեղեցիների կոնֆերանս, Եկեղեցի եւ հասարակութիւն յանձնաժողովի մարդու իրաւունքների գծով գործադիր քարտուղար), Եւրոպական կառոյցներում Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչ Հայր Նեկտարիուս Իոանիուն եւ Խօսէ Լուիս Բազան (Միգրացիայի գծով իրաւական խորհրդատու, Կաթոլիկ եպիսկոպոսների Եւրոպական յանձնաժողով):

«Եկեղեցի եւ պետութիւն փոխյարաբերութիւնները Հայաստանում. հնարաւորութիւններ եւ մարտահրաւէրներ» խորագրով չորրորդ նիստը սկսուեց ՀՀ Արդարադատութեան նախարարի առաջին տեղակալ Գրիգոր Մուրադեանի զեկոյցով: Այնուհետեւ բանախօսութիւններով հանդէս եկան նաեւ դոկտոր Թովմաս Սամուէլեանը (Հայաստանում Ամերիկեան համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի դեկան), Արտակ Զաքարեանը (ՀՀ ԱԺ Արտաքին հարցերով մշտական յանձնաժողովի նախագահ) եւ Տիգրան Մեսրոպեանը (ՀՀ կառավարման ակադեմիա, քաղաքագէտ):

Գիտաժողովի եզրափակիչ նիստի ընթացքում տեղի ունեցաւ քննարկում՝ Եկեղեցու դերը ՀՀ հասարակական կեանքում. մարտահրաւէրներ եւ հեռանկարներ թեմայի շուրջ: Թեմայի քննարկման շրջանակներում անդրադարձ կատարուեց կրօնական փոքրամասնութիւնների հետ յարաբերութիւններին, համատեղ ջանքերով փորձառութիւնների, մօտեցումների եւ տեսակէտների փոխանակման անհրաժեշտութեանը, ինչպէս նաեւ Մայր Եկեղեցու իրաւունքները ոտնահարող գործընթացների կանխարգելմանը վերաբերող հարցերի:

Գիտաժողովի աւարտին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի տնօրէն, Արթիկի թեմի առաջնորդ՝ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանը երախտագիտութիւն յայտնեց ներկաներին գիտաժողովին մասնակցութեան համար՝ ընդգծելով, որ նման միջոցառումները համատեղ փորձի փոխանակման միջոցով առաւել պիտի նպաստեն երկխօսութիւնների զօրացմանը: Դրական գնահատելով եւ ամփոփելով երկօրեայ գիտաժողովի արդիւնքները՝ մասնակիցները կարեւորեցին նման գիտաժողովների գումարման շարունակական լինելը:

## Հայաստանի ժողովուրդը մտահոգուած է

Շարունակուածէջ 1-էն

մակերպութեան գործադիր խորհուրդի անդամ, դոկտոր Զաւէն Գալայճեան այս առթիւ ըսած է. «Իր բնոյթէն ելլելով՝ փտախտը շատ դժուար է բացայայտել: Այդ պատճառով ալ մեթոտներու ընտրութիւնները եւ վերլուծութեան ոլորտները ընտրուած են շատ զգուշօրէն՝ զեկոյցը առաւելագոյնս արժէքաւոր դարձնելու համար: Հայաստանի տնտեսութեան եւ հանրային կեանքի տարբեր ոլորտները ուսումնասիրելու ընթացքին խումբը օգտագործած է ինչպէս քանակական, այնպէս ալ իրական դէպքերու ուսումնասիրման մեթոտներ արդարադատութենէն, ռազմական ոլորտէն մինչեւ փողերու լուացում եւ մանրածախ կոռուպցիա՝ ընդհանուր կոռուպցիայի եւ կաշառակերութեան մակարդակը առաւելագոյնս ճշգրիտ չափելու համար: Ամենաապշեցուցիչ բացայայտումն այն էր, որ կոռուպցիան Հայաստանի խիստ կենտրոնացուած է եւ կը ստեղծէ անյաղթահարելի արգելքներ՝ երկրի տնտեսական զարգացման եւ առաջընթացի համար»:

«Policy Forum Armenia»-ն շահոյթ չհետապնդող վերլուծական կեդրոն է, որ նպատակ ունի ամրապնդելու Հայաստանի տնտեսական զարգացումը եւ ազգային անվտանգութիւնը եւ այդպիսով աջակցելու Հայաստանի մէջ արդիւնաւէտ հանրային քաղաքականութեան իրականացման:

## ԿԵՐԷՆԸ՝ ԿԱՅԱՑՄԱՆ ՇԵՄԻՆ

ԶՈՀՐԱԲ ԸՌ-ՔՈՅԵԱՆ

Արցախի Քաշաթաղի շրջանի Կովսական համայնքի Կերէն գիւղը 2013 թ. Յունիսի 27-ից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութեան որոշմամբ, ստացել է առանձին համայնքի կարգավիճակ. գտնւում է Կովսական-Կապան ճանապարհի վրայ՝ Ողջի գետի աջ ափին: Համայնքի կազմում են նաեւ Սպիտակաշէն եւ Գրհամ գիւղերը:

Մինչ այժմ բնակավայրը չի էլեկտրաֆիկացուել. կայ յոյս, որ մօտակայ ժամանակներում կը կարգաւորուի նաեւ այդ հարցը:

Իսկ ճանապարհը վերջերս է բարեկարգուել. կայ ասֆալտապատման ծրագիր: 2012 թուականին վերջնականապէս աւարտուեց դպրոցի շէնքի կառուցումը, եւ գիւղում սկսեց գործել միջնակարգ դպրոցը, որն այժմ ունի 15 աշխատող, որից ուսուցիչները՝ ութ եւ 14 աշակերտ: Այս տարի առաջին դասարան յաճախում են 2 աշակերտ, աւարտական դասարաններում աշակերտներ չկան:

Սեպտեմբերի 8-ին այցելեցի Կերէն, որտեղ կան հնադարեան դամբարաններ եւ արդէն 10 տարի է, ինչ պեղւում են հնագէտ Արտակ Գնունու կողմից: Զրուցեցի դպրոցի տնօրէն Վալերի Թումասեանի հետ, եղայ դպրոցում: Տեղեկացրեց, որ կրթօճախը հիմնականում ապահովուած է ուսուցիչներով, միայն կայ պատմութեան ուսուցչի պահանջ:

Մանկավարժներից Աշխէն Ամիրխանեանն ընտանիքով եկել է Դիլիջանից, ունի 3 դպրոցահասակ երեխայ. ամուսինը վերջերս զոհուեց աւտովթարից: Ամուսիններ՝ Ա, Աւագեանն ու Ն. Մարտիրոսեանը նոյնպէս դասաւանդում են դպրոցում, ունեն 3 երեխայ, երկուսը՝ դպրոցականներ: Դոլորէս Ղազարեանը Կերէնի բնակիչ է, ժամանակաւոր դասաւանդում է հայոց լեզու եւ գրականութիւն: Տնօրէնը գիւղի հիմնադիրներից է. այստեղ են բնակւում 2 որդիներն իրենց ընտանիքներով:

Աշակերտների մի մասը գալիս են հարեւան Գրհամ գիւղից: Համայնքի Սպիտակաշէն գիւղում կան 4-5 դպրոցականներ, սակայն մեքենայի բացակայութեան պատճառով յաճախում են Կապանի դպրոցներ: Կայ գոյքի եւ դասագրքերի պակաս: Ճիշդ է, շէնքը նոր է կառուցուել, սակայն դասարանները չեն հերիքում: Աշակերտների ուսման վրայ բացասական մեծ ազդեցութիւն է թողնում էլեկտրական հոսանքի բացակայութիւնը: Այս ամէնով հանդերձ՝ դպրոցը գործում է, եւ բոլոր աշակերտները ձգտում են լաւ սովորել: Յետ չեն մնում նաեւ արտադպրոցական ծրագրերից: Միջանցքի պատերին ստեղծագործ աշակերտների գործերն են փակցուած: Առաւելապէս հետաքրքրեց 10-րդ դասարանի աշակերտուհի Ալիսա

Ամիրխանեանի ստեղծագործութիւնները՝ գունանկարներ ջրաներկով եւ գծանկարներ:

Ուսուցչուհի Աշխէն Ամիրխանեանի դուստրը՝ Ալիսան, 3 տարի յաճախել է Դիլիջանի Յովհ. Շարամբէեանի անուան գեղարուեստի պետական քոլէջ: Այժմ էլ՝ որպէս ազատ ունկնդիր, յաճախում է Կապանի գեղարուեստի պետական քոլէջ: Սիրում է նկարել, սակայն որոշել է իրաւաբան դառնալ:

Տնօրէնն ու ուսուցիչներն ասացին, որ բոլոր առարկաները լաւ է սովորում, օգնում է կրտսերներին: Իմ հարցին, թէ ինչո՞ւ է որոշել իրաւագէտ դառնալ, ասաց՝ շատ է սիրում կարգ ու կանոն: Աւելացրեց նաեւ, որ դժուարութեամբ է նկարելու համար նիւթեր ձեռք բերում, յատկապէս Վատիկայի համար: Զնայած առկայ պայմաններին՝ սիրում է Կերէն գիւղը: - Ազգանուէր գործ եմ համարում, որ բնակւում ենք ազատագրուած մեր հայրենիքում, շէնացնում ենք, - ասաց Ալիսան՝ աւելացնելով, որ հաւատում է՝ կ'ունենան էլեկտրական հոսանք եւ բարեկեցիկ բնակարան:

Նոյն ցանկութիւնն է յայտնում նաեւ 3-րդ դասարանցի Լիլիան: Գիւղում վերջերս բացի դպրոցից, կառուցուեցին եւս 3 բնակելի տուն, սակայն դա դեռ քիչ է, որ գիւղը կայանայ:

Անհրաժեշտ է կարգաւորել նաեւ խմելու եւ ոռոգման ջրի խնդիրը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* $50,00 * $100,00 (first class) for USA

$ 100,00 (Air Mail) for Canada.

$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: ----------------------------------------

Address: ---------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :------------------------ Fax : --------------------------

# ՍՈՒՐԻԱՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԸ ՔՈՅՐ ՈՒ ԵՂԲԱՅՐ

***ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ***

*Կարդալով «ԱՐԱՐԱՏ» օրաթերթի 10 Հոկտ. 2013-ի թիւը եւ հոն գտնելով յօդուած մը Հալէպի մէջ Քսան Հնչակեան ղեկավարներու Պայազիտի հրապարակի վրայ կախաղան բարձրացուելու յիշատակին չկրցայ չըսել Պուած հայոց, Հալէպի մէջ ապրող հայոց միասնականութեան, Պուած հայոց շտապ օգնութեան մարմինին:*

*Ուրեմն քառեակի Պուած, որ ողջ հալէպահայութիւնը իր բոլոր կազմակերպութիւններով Կիրակի 8 Սեպտեմբեր 2013 թ.-ին հոգեհանգստեան պատգամէ մը ետք նուիրուած Քսաններուն եւ Սուրիոյ ներքին պատերազմի զոհերուն, նոյն օրը երեկոյեան ժամը 5-ին հովանաւորութեամբ Բերիոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Շահան Եպս. Սարգիսեանի ու կազմակերպութեամբ Ս.Դ.Հ.Կ.-ի Տխրունի Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութեան յիշատակի երեկոյ մը տեղի ունեցած է: Ներկաները խուռներամ բազմութեամբ լեցուցած են «Գէորգ Եսայեան» մեծղի սրահը դարձեալ ու վերստին գովաբանելու համար Քսան Հնչակեան անմահները, որոնք կախաղանով պատժուեցան Օսմանեան Թուրքերուն կողմէ:*

*Այդ երեկոն երեւոյթ է:*

*Այդ երեկոն քաջարի պատասխան մըն է բոլոր անոնց համար, որոնք հարց կու տան ինծի՝ հոս, Պէյրութի մէջ, թէ ի՞նչ պիտի ըլլայ հայ գաղութին վիճակը Հալէպի մէջ, Սուրիոյ մէջ այս շարունակուող պատերազմի ընթացքին: Նոյն հարցումը կը տրուի բոլոր բոլորին կողմէ Հայաստանէն ու բոլոր այն երկիրներէն ուր հայեր կ՚ապրին:*

*Ահա՛, վերի ձեռնարկն է պատասխանը, որ տրուած է Հալէպէն, հարիւրներով խմբուած, միասնականութեամբ կը փառաւորուի յիշատակը Քսան Հնչակեան Նահատակներուն:*

*Ու տակաւին, հոն, Հալէպի մէջ բացուած են դռները հայ դպրոցներուն:*

*Այս եւս պատասխան մըն է այն հարցումին, որ ի՞նչ պիտի ըլլայ սուրիահայ գաղութին վիճակը:*

*Ներքին պատերազմը, արտաքին աշխարհէն հրահրուած պատերազմը կը շարունակուի, փամփուշտներու սուլոցը դադրած չէ, տակաւին հոս ու հոն ռումբեր կ՚իյնան, մարդիկ կը զոհուին, տուներ փուլ կուգան, բայց հայ գաղութը կը շարունակէ իր մշակութային գործը:*

*Ներքին պատերազմի առաջին օրէն ի՞նչ եղած է հայ գաղութին կեցուածքը այս ներքին պատերազմին շուրջ- հայը դէմ է մէկ արաբի իսկ արեան թափուելուն իր մայր հողին վրայ:*

*Հայը դէմ է, որ մէկ մզկիթ փուլ գայ:*

*Հայը դէմ է, որ մէկ եկեղեցի կործանուի:*

*Այս է հայուն ուզածը:*

*Ահա թէ ինչու հայը որպէս արաբական երկրի քաղաքացի, դէմ ըլլալով մէկ հոգիի իսկ սպանութեան երկրին խաղաղութեան ու բարգաւաճման համաձայն է, այդ բարգաւաճումին իր բաժինը բերելու պայմանաւ:*

*Ահա թէ ինչու Սուրիոյ հայ քաղաքացիները գործնապէս այս օգնութեան փութացին իրենց իսկ ստեղծած շտապ օգնութեան մարմինով, ոչ միայն հայ բնակիչներուն, այլ նաեւ արաբ տուժած ընտանիքներու, առանց նկատի առնելու կրօնական տարբերութիւնները, որոնք կոչուած են սէր ու եղբայրութիւն քարոզելու:*

*Հիմա Հոկտեմբերի մէջ ենք:*

*Հոկտեմբեր ամիսը հայոց համար Թարգմանչաց Տօնախմբութեան նուիրուած է: Հայերը, Հայաստանէն սկսեալ սրբութեամբ կը նշեն այս տօնը, ուր որ ապրին:*

*Վստահ եմ, հակառակ փամփուշտներու սուլոցին, ռումբերու շաչումին, ռումբին բեկորներու տարտղնումին, Սուրիոյ մէջ, պատերազմական Սուրիոյ մէջ այս սուրբ տօնը պիտի դարձեալ ու նորէն յիշատակուի, ու իր զաւակներէն մէկը, շարունակելու համար նոյն գործը, այստեղ Պէյրութի մէջ 11 Հոկտեմբերին ելոյթներ ունեցաւ Թէքէեանի անունը կրող աշակերտութեան, Հայ Աւետարանական Քոլէճի աշակերտութեան եւ Հայկազեան համալսարանի մէկ դասարանի ուսանողներուն, պատասխանելով գլխաւորաբար մէկ հարցումի.-ի՞նչ պիտի ըլլայ հալէպահայութեան վաղուան օրը:*

*Ըսի անոնց.- պատասխանը ձեր հարցումին տուին Հալէպի հայերը իրենց միասնականութեամբ կամ ընդհանուր հաւաքուելով իրենց բոլոր կազմակերպութիւններով, հովանաւորութեամբ Առաջնորդ Հօր պանծացուցին Քսաններու գործը կախաղաններէն հնչող...:*

*Հայ գաղութը պիտի մնայ, պիտի մնայ նաեւ լիբանանահայ գաղութը, որպէսզի մնայ եւ շարունակուի հայ - արաբ գործակցութիւնը արտասահմանէն մինչեւ Հայաստան:*

*Հայը դէմ է կործանումին ճաշակած ըլլալով կործանման արդիւնքը:*

*Հայը դէմ է մէկ տան փլատակ դառնալուն:*

*Մէկ մզկիթի մէկ քարին իյնալուն:*

*Հողը սուրբ է, հողը արարիչ է: Վայ հողը արիւնով ծածկողներուն, երբ նոյն սուրբ հողը կարօտ է ցորեանի սերմնացաններուն:*

*Ո՛չ: Այդ օրը հեռու չէ:*

*Այդ օրը աւերումին պատասխանը պիտի ըլլայ:*





ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

## ԳԻՆԵՁՕՆ «ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ» Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆ



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմը գեղեցիկ գաղափարն ունեցած էր գինեձօնով մը ներկայացնելու առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի «Ապրուած կեանքի յուշեր» հատորը: Տօքթ. Պետրոս եւ Կարինէ Տաղլեաններու հովանաւորութիւնը վայելող սոյն միջոցառումը տեղի ունեցաւ Հինգշաբթի Հոկտեմբեր 17, 2013, երեկոյեան ժամը 7:30ին, Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ «Տաղլեան» մշակութային կեդրոնին մէջ, որուն ներկայ էր գաղութի տարբեր կազմակերպութիւններէ բաղկացած ընտրանի բազմութիւն մը:

Հանդիսավար Յովհաննէս սարկաւագ Գումրույեան իր բացման խօսքին մէջ առանձնապէս շեշտեց Թեմիս բարեջան առաջնորդի նկարագրային առանձնայատկութիւնները թէ որպէս ժրաջան ու իր կոչումին արժանի արդիւնաշատ հոգեւորական մը եւ թէ որպէս տեսիլք ունեցող հոգեշունչ գրող: Այս բոլորի արգասիքն է իր նոր հրատարակած «Ապրուած Կեանքի Յուշեր» հատորը:

Տօքթօրներ՝ Պետրոս եւ Կարինէ Տաղլեաններու մեկենասութեամբ եւ վաղամեռիկ բժիշկ՝ Եղիա Տաղլեանի յիշատակին ձօնուած Յովնան Արք. Տէրտէրեանի «Ապրուած Կեանքի Յուշեր» հատորի մասին հանգամանօրէն արտայայտուեցաւ առաջնորդարանի գրադարանի պատասխանատու՝ Հայկ Մատոյեան: Ան բոլորովին նոր տեսանկիւնէ մը մօտեցաւ աւելի քան տասը հատորներու հեղինակ Յովնան Արք.-ի՝ «Ապրուած Կեանքի Յուշեր» գիրքին, որ ամբողջական հաւաքածոյ մըն է իր հոգեշունչ մանրապատումներուն:

«Գիրքը բացառիկ է իր բնոյթով: Այստեղ առաջին անգամ ըլլալով փորձ մը կատարուած է Յովնան Արք. Տէրտէրեանի բազմաթիւ աշխատութիւններու մէջէն հաւաքել, գրել եւ տրամաբանական շարքի վերածել սրբազանի անձնական յուշերը, մտորումներն ու մանրապատումները: Այլ խօսքով՝ «Ցանուած Լոյսի» մասունքներն ի մի հաւաքելով, կազմուած է լոյսի ամբողջութիւն մը «Ապրուած Կեանք մը»




կ՚ըսէ Մատոյեան: Իսկ այս կեանքը իր կէս դարուան փորձառութեամբ տարածուած է Լիբանանէն Հայաստան, Անգլիա, Գանատա, ԱՄՆ եւ այլ իրողութեանց վրայ:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հոլիվուտի Ս. Յովհաննու Կարա-

Շար.ը էջ 18

## ԱՐԺԱՆԻՆ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԵՑԱՒ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՊԷՍ

ՏՕՔԹ. Ա. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Կիրակի, 20 Հոկտեմբեր 2013, ժամը 5:00-ին, իրանահայ Միութեան հանդիսասրահէն ներս, արժանավայել կերպով նշուեցաւ Նահապետ Մելգոնեանի Գրական, Մշակութային եւ Եկեղեցանուէր 40-ամեայ ծառայութեան նուիրուած յոբելինական պերճաշուք հանդիսութիւնը՝ Թէքէեան Մշկ. Միութեան, Իրանահայ Միութեան եւ Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Վրժ.ի, Սանուց Միութեան միացեալ նախաձեռնութեամբ:

Հանդիսութիւնը կը վայելէր Երուսաղէմի Հայոց պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանի նախագահութիւնը եւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ու ՀՀ Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոսութեան հովանաւորութիւնը:

Իրանահայ Միութեան կողմէ Թոմիկ Ալեքսանեանի ողջոյնի եւ Բարի Գալուստի խօսքէն ետք, բաւականին խճողուած եւ սակայն նկատուելի սահունութեամբ ընթացած յայտագրին գործադրութեան ազդանշանը տուաւ Հանդիսավար՝ Դոկտ. Կարպիս Տէր Եղիայեան, որ իր բացման խօսքին մէջ շեշտակիօրէն բարձր գնահատեց օրուան մեծարեալին հոգեւոր, մշակութասէր եւ հայրենանուէր օրինակելի հայու վաստակը՝ յաջորդաբար բեմ հրաւիրեց օրուան զեկուցաբերները:

Բեմ բարձրացաւ ծանօթ հրապարակագիր՝ Վաչէ Սեմերճեանը, խօսք առնելու յոբելեարի «Զքարացած Քարեր» գիրքին մասին, որ ընդհանրապէս օրագրային էջեր են: Մելգոնեան կը պատմէ երուսաղէմի մեր համայնքի եւ եկեղեցական ցաւերու մասին:

Փրոֆ. Օշին, Քէշիշեան, իր հերթին ներկայացուց «Սաղէմի Օրեր» գիրքը, ուր մեծարեալը խիտ եւ իմաստալից կերպով կը պատմէր իր հանդիպումներու մասին հայ ականաւոր դէմքեր՝ Կիւրեղ Վարդապետի, Ուիլիամ Սարոյեանի, Ալեք Մանուկեանի եւ այլ անձնաւորութիւններու հետ:

Հանրածանօթ հոգեւոր քարոզիչ՝ Պարթեւ Կիւլիւմեան մեկնաբանեց «Երկնքի Ժպիտը» գիրքը, ուր Յոբելեարը իր երեք պատմուածքներով կը նկարագրէր հրաշապատում երկնային ժպիտը: Կիւլիւմեանի վերտառութեամբ՝ ճշմարիտ ժպիտն այն էր որ կը բխէր Հաւատքէն, Աղօթքէն, Յոյսէն, Ճշմարտութիւն մը, որ համազօր էր հրաշագործութեան:

Վերջապէս Տօքթ. Սարգիս Մեսրոպեան՝ ներկայացուց Նահապետ Մելգոնեանի երեսուն տարիներու վրայ երկարած գիտաշխատութեան մը ամփոփումը հանդիսացող «Մարդկային Երիկամունքը» գիրքը, որ կուգար ամէն մակարդակներու վրայ գոհացում տալու երիկամներու հիւանդութեամբ չահագրգռուած հիւանդներուն եւ հայ ընթերցասէրներուն:

Մէջընդմէջ վերոնշեալ Գրականագիտական ներկայացումներու՝ գեղարուեստական ելոյթներով հանդէս եկան Գրականագիտուհի՝ Լիլիթ Քէհէյեան, հեղինակի գործերէն ընթերցումով եւ արուեստագէտ՝ Պետրոս Սարգսեան, Թումանեանի «Հայրենիք»ի ասմունքով, որոնց յաջորդեցին գնահատագիրներու տուչութիւն, որոնք ներկայացուած էին Ատամ Շիֆի, Կլենտէյլի քաղաքապետ՝ Տէյվ Վեվէրի, Լոս Անճելըսի Վերակացու՝ Մայքլ Անթոնովիչի եւ պետական այլ հեղինակութիւններու կողմէ:

Այնուհետեւ, իրենց ողջոյնի խօսքերով հանդէս եկան Հ.Հ. Լոս Անճելոսի գլխաւոր հիւպատոսութեան ներկայացուցիչ՝ Տիար Արտակ Գալստեան, որ բարձր գնահատեց Նահապետ Մելգոնեանի հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը: Ան միշտ կողքին է կանգնած իր հայրենիքին եւ ժողովուրդին: Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան իսկ շնորհակալութեան խօսքով՝ Յոբելեար Նահապետ Մելգոնեան:

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, յատկապէս, ծանրացաւ Մեծարեալին՝ եկեղեցասիրութեան, հայ մշակոյթին, հայրենիքին, Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնին եւ Սրբ. Երուսաղէմի հանդէպ ունեցած անքակտելի հաւատարմութեան վրայ, որոնք զինք արժանացուցին Սրբ. Սահակ եւ Սրբ. Մեսրոպ՝ Մայր Աթոռ Սրբ. Էջմիածնոյ գերագոյն Շքանշանին:

Ամենապատիւ Տ. Պատրիարք Հայրը խիստ ոգեւորիչ գտաւ նման երկիրներէ ներս յարգանքի եւ գնահատութեան երեւոյթները, որոնք կուգան արժեւորելու ընդհանրական նպատակներու ծառայութեան կոչուած մարդիկը, որոնց հոյլին կը պատկանի Նահապետ Մելգոնեանը, որուն աշխատանքի ներդրումը մեծ է եղած սաղիմահայ կեանքին մէջ:

Շար.ը էջ 18



## ԱՐՈՒԹԻՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄՆԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ Է

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի յանձնախումբը, որ կազմուած է շրջանի հայկական մեծագոյն քաղաքական, կրօնական եւ հասարակական կազմակերպութիւններէ, միաձայնաբար յանձնախումբի գործադիր տնօրէն նշանակած է Պրն. Արութին Յարութիւնեանը:

Մենք ուրախութեամբ կ՚ողջունենք Արութին Յարութիւնեանը իբրեւ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի յանձնախումբի գործադիր տնօրէն: Հակառակ յանձնախումբի առաջ գտնուող բազմաթիւ մարտահրաւէրներուն, Արութինի նման բարձր որակաւորում ունեցող անձնաւորութիւն մը ունենալը նման կարեւոր պաշտօնի մը վրայ, կ՚ընդարձակէ մեր հետեւողական պահանջատիրական պայքարը: Այժմ, ըստ իր ծրագիրներուն յանձնախումբը կրնայ իր ամբողջական հնարաւորութիւններով առաջ ընթանալ: Նշեցին յանձնախմբի երեք համանախագահները՝ Կարօ Ղազարեանը, Յարութ Սասունեանը – Թալին Եագուպեանը:

Ինծի համար մեծ պատիւ է այս պատասխանատու պաշտօնի ստանձնումը: Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի Յանձնախումբի անդամները, մէկ տարիէ աւելի, ջանք չեն խնայած ամուր հիմքեր հաստատելու, պատշաճ ձեւով կազմակերպելու Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը, որպէսզի մեր արդար ձայնը աւելի լսելի դարձնենք ամբողջ աշխարհին: Այս յանձնախումբի գործունէութեան բուն նպատակն է, արդարութիւն հաստատել Թուրքիոյ գործած յանցագործութիւններու եւ յատկապէս Հայոց Ցեղասպանութեան համար: Հակառակ Թուրքիոյ կառավարութեան նենգ մերժողական քաղաքականութեան, աշխարհի բազմաթիւ երկիրներ եւ միջազգային կառոյցներ ճանչցած են Հայոց Ցեղասպանութիւնը եւ դատապարտած են Թուրքիան, միաժամանակ աջակցելով հայ ժողովուրդի պահանջատիրական պայքարին, ճանաչման եւ հատուցման արդար պահանջներուն, – ըսած է Յարութիւնեան:

Արութին Յարութիւնեանը մասնագիտութեամբ իրաւաբան է եւ նախագահը՝ Միացեալ Հայ Երիտասարդներ կազմակերպութեան:

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի Յանձնախումբը կազմուած է հետեւեալ կազմակերպութիւններէն.-

-Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ

-Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Առաջնորդարան

-Հայ Կաթողիկէ Եկեղեցի

-Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն

Շար.ը էջ 18

## ՍԻՐԱՆ ՍԵԶԱ ԳՐՈՂԻՆ 110-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱ ԱՃԱՐՈՆԵԱՆ



Հակառակ գաղութէն ներս բազմապիսի խաչաձեւումներուն, Կլենտէյլի Կեդրոնական Գրադարանի հանդիսասրահը գրասէր հոծ բազմութիւն մը հաւաքուած էր ներկայ գտնուելու Սիրան Սեզա գրողին ծննդեան 110-ամեակի հանդիսութեան:

Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելոսի վարչութեան վերջին ձեռնարկին հանդիսավարութիւնը ստանձնած էր Փրոֆ. Օշին Քէշիշեան, որ Լիբանանի մէջ գործած նախկին պոլսահայ գրողին՝ Սիրան Սեզային անձին ու գործին ծանօթ մըն էր: Քէշիշեան դիպուկ կերպով անդրադարձաւ կին գրողներու անցած ուղիին՝ 18րդ եւ 19րդ դարերուն, հայ կիներու յատուկ հրատարակութիւններուն, ընկերային դժուարութիւններուն՝ հասնելու համար 20րդ դարու առաջին երեսնամեակին, երբ Սիրանուշ Զարիֆեան 1932 թուականին կը հիմնէր «Երիտասարդ Հայուհի» գրական ամսագիրը: Օշին Քէշիշեան պատրաստելէ ետք պարարտ ենթահողը՝ հրաւիրեց Սեզայի հետ գործակցած, օժանդակած Սէսիլ Քէշիշեանը:

*Իր ներկայութիւնը, ինքնին երեւոյթ մըն էր Պէյրութի մշակութային եւ ընկերային կեանքէն ներս: Իր զօրաւոր անհատականութեան դրոշմը կարելի չէր անտեսել: Հոն ուր լճացում կար կամ թերացում՝ իր ընդվզումի ձայնը անպայման կը հնչէր: Եւ ասիկա ոչ միայն իր լրագրողի հանգամանքով, այլ կեանքի, առօրեային հոլովոյթին մէջ՝ որպէս նկարագրի էական երկրորդ բնութիւն: Անհանդուրժող էր մանաւանդ, կեղծիքի եւ շողոմանքի երեւոյթներուն հանդէպ: Ճշմարտութեան իր մատնանշումները, շատ անգամ, անհանգիստ կը դարձնէին, իրենց համբաւին վրայ գուրգուրացող կարգ մը տարեկից գրողները: Այս առնչութեամբ, կը յիշեմ Պէյրութի Սայեաթ Նովա ճաշարանին մէջ, լիբանանահայ գրողներու մէկ հոծ հաւաքը, ուր երէց եւ նորահաս գրողներու սերունդը, շնորհիւ ֆրանսահայ գրող Զարեհ Որբունիին նախաձեռնութեան, առաջին անգամ ըլլալով, հաւաքուեր էին հիմը դնելու Գրական լայն միութեան մը: Անկիւն մը, մեկուսի նստեր էին գաղութին երէց գրողներու ծանօթ եռեակը: Անշուշտ խօսքի նախապատուութիւնն ալ անոնց տրուեցաւ: Բայց զարմանալիօրէն, փոխանակ գործնական եւ շինիչ առաջարկներ բերելու, անոնք, խօսքը իրարու բերնէն խլելով, սկսան պատմել իրենց երիտասարդական յուշերը, զանոնք զունազարդելով կարօտաբաղձութեան շղարշով եւ անդադար իրարու դիմելով, կը կրկնէին «Կը յիշե՞ս այսինչ... կը յիշե՞ս այն ինչ ...» յանկերգները: Ցանկարծ, այդ հովերգութիւնը կտրուկ ընդմիջուեցաւ. Տիկին Սեզան էր, ընդվզած, բացագանչեց. «Ի՞նչ կը գրգռէք անցեալի յուշերու մոխիրները, որոնց մէջ կային այնքան քէն ու մախանք: Դուք նոր խօսք ըսէք նոր կացութեան մասին: Ուրախութեամբ հոս կը տեսնեմ ներկայութիւնը բազմաթիւ երիտասարդ գրողներու, որոնք ձեզմէ կը սպասեն քաջալերանքի խօսքեր ու յառաջընթացի ցուցմունքներ: Անոնք եկած չեն ունկնդրելու ձեր եսերուն ինքնագովութիւնը: Իսկ ձեզմէ ո՞վ հետաքրքրուեցաւ անոնցմով, ո՞վ սատարեց անոնց կազմաւորումին»:*

*Դէմը պապանձումն էր Զաքարիային:*

*Յաջորդ ժողովին, անոնք ոչ միայն չեկան, այլ կարծեմ իրենց պաշտպան կուսակցութիւններուն միջոցաւ ականահարեցին միութեան գաղափարը: Ուզեցի հոս շեշտել տիկին Սեզային այս խիստ ուրայատուկ նկարագրին գիծը, որ դժբախտաբար այնքան պակսած էր ուրիշ շատ մը երէց գրողներու մօտ : Ան դարձեր էր մեր գաղութին խղճմտանքին անլռելի ձայնը, որ լսելի դարձաւ խօսքով, գրիչով, բեմերէն եւ մանաւանդ իր արժէքաւոր գրականութեամբ, մատուցուած՝ շքեղ հայերէնով մը եւ ճկուն, նրբին, պատկերալից ոճով մը գեղապաշտ:*




*Ան ծնաւ պոլսահայ զարգացած ընտանիքի մը յարկին տակ, ուր արդէն բանաստեղծութիւնը կը թեւածէր տիրական, յանձինս իր եղբօր, մեր վերջին քնարերգակ եւ գերզգայուն բանաստեղծ Մատթէոս Զարիֆեանին: Ան սնեցաւ այդ, գեղեցիկի եւ ներդաշնակութեան մթնոլորտին մէջ, ինչպիսին էր նաեւ անցեալ դարասկիզբին պոլսահայ գրականութեան ծաղկեալ վիճակը եւ բնականաբար ինք ալ բացուեցաւ գրականութեան, նախընտրելով արձակ պատմուածքի սեռը, անոր տալով սակայն քնարական շունչ, երազանք ու սլացք: Իր պատմուածքները նախ լոյս տեսան «Հայրենիք», «Նայիրի» եւ այլ ամսագրերուն մէջ, 1926-էն սկսեալ եւ հատորի վերածուեցան շատ աւելի ուշ՝ 1959 էն 1960 թիւերուն, Պէյրութի մէջ, «Պատնէշը», «Մեղաւորուհին» եւ «Հեքիաթներ» խորագիրներով:*

*Իր գրական վաստակը ձեւաւորուեցաւ երեք հանգրուաններով:*

*Առաջին շրջանը գրուած է գեղեցիկի ընկալչութեամբ, հեքիաթային աշխարհ մը հաղորդական դարձնելու միտումով: «Կակաչներու իշխանուհին», «Մեղաւորուհին», «Ջենոպի», «Շամիրամ», «Աղաւնիներու քարայրը», «Շէրիֆի» եւ այլ պատմուածքներ կը յատկանշուին իրենց քնարական շունչով եւ նրբահիւս ոճով: Անցեալի եւ իր ժամանակի կանացի դէմքերու ապրուած տրամները պատկերուեցան արձակ բանաստեղծութեան կաղապարումով, տեսակ մը շարունակելով պոլսահայ կին գրողներու՝ Սիպիլի, Մաննիկ Պէրպէրեանի, Եւփիմէի մոտայիկ ու պչրագեղ գրկանութիւնը: Իր առասպելական կամ առօրեայ համեստ հերոսուհիները ընդհանրապէս կը ներկայացուին որպէս խաբուած սիրոյ, մերժումի եւ լքումի զոհեր: Այս Շրջանին իսկ Սեզայի մօտ զգալի կը դառնայ լեզուի վայելչագեղութիւնն ու թարմատի շունչը: Ինքնատիպ է իր ընկալումով եւ հայեցողութեամբ: Իր նպատակը ֆեմինիզմի ջատագովութիւնը չէ միայն, այլ՝ կիներուն ճանչցնել կիներու բարդ եւ զգայուն հոգեկան աշխարհը՝ որպէս ինքնաճանաչում:*

*Այս շրջանին իսկ, շնորհիւ Սեզային, մեր գրականութեան մէջ, առաջին անգամ ըլլալով մուտք կը գործէ Լիբանա՛նը: Մանաւանդ, անոր լեռնաշխարհը՝ նախ իր խորհրդաւորութեամբ եւ ապա իր հրաշագեղ բնութեամբ, հպարտ ու քաջարի մարդոցմով եւ տոհմիկ, հայկականը այնքա՜ն յիշեցնող բարքերով, ինչպէս օրինակի համար, կուժերը ուսերնուն, աղբիւրը Ջուրի գացող նազելաճեմ տրիւզ աղջիկներով ու հարսերով, միշտ պահելով երազայինի շղարշեայ բնոյթը:*

*Այս օրերու ակնոցով դիտած, գուցէ միամիտ ու պարզունակ թուի այս գնահատականը: Բայց մի մոռնաք որ Էռնէսթ Ռընանի եւ Մոռիս Պառէսի նման հռչակաւոր ֆրանսացի գրողներ, տարբեր երանգներով չէր որ ներկայացուցին այդ օրերու Լեռնալիբանանը: Սեզայինը սակայն, պատահական սէր մը չէր. տէրզօրեան անդոհանքէն ետք, մեր ժողովրդին ուղեկորոյս մնացորդացը յանկարծ ապահով կայք կը գտնէր Լիբանանի մայրիներուն հովանիին տակ: Եւ կարծեմ շնորհիւ այդ նմանութիւններուն է որ, շուտով կ՛ընտելանար նոր միջավայրին: Կորսուածին կարօտը հիմնական դեր կը կատարէր:*

*Առաջին ակնարկին դիւրահաւանութենէն ետք սակայն, կեանքի նոր պայմաններն ու դէպքերը կը թելադրէին տարբեր մօտեցում, ռոմանթիզմէն դէպի իրապաշտութիւն անցումով: Մնացորդացին կարեւոր մէկ զանգուածը, տակաւին կը տուայտէր թշուառութեան, թիթեղաւան կոչուած աղտեղութեան մէջ, իսկ միւս զանգուածն ալ, մեր որբերը, այլազան միսիոնարական եւ բարեգործական որբանոցներու մէջ, տակաւին ենթակայ՝ ֆիզիքական եւ հոգեբանական այլատեսակ զրկանքներու եւ ցնցումներու, անձկութեամբ կը սպասէր նոր տնօրինումներու: Այս մարզէն ներս ալ, Սեզա առաջիններէն հանդիսացաւ այդ իրավիճակը մատնանշող, պախարակելով անմարդկային վարուելակերպն ու պատուելիական կեղծիքը այդ հաստատութիւններուն: Իր «Անո՞նք» խորագիրով վիպակը յատկանշական է բովանդակութեան, ոճի եւ ընկալումի նորութիւններով: Հոն լեզուի եւ ոճի պչրագեղ սեթեւեթանքը անհետացած է արդէն, իսկ կեանքի դաժան տնօրինութիւնը վանած է ընդմիշտ ռոմանթիք զգայնութիւնները, տեղի տալով իրապաշտ մօտեցումին եւ դիտարկումին: 1925-ական թուականներու հողմացրիւ հայութեան կենդանի վաւերաթուղթն է ան ամէն բանէ առաջ: Այդ վիպակով, Սեզա գրականութեան կը բերէ մնացորդացին տիպական չորս կերպարները, որոնց կեդրոնական երկուքը որբեր են, կենդանի, ապրող գիծերով վրձինուած: Սիրարփի եւ Օննիկ, արդէն նորահաս չափահասներ, կը սիրեն զիրար: Այդ սէրը, տոկալու եւ յարատեւելու իրենց միակ կռուանն է: Սակայն, չես գիտեր որ մէկ անգութ ուղեղին որպէս ծնունդ, կ՛որոշուի «ծախու» հանել որբուհիները, որդեգիրի կամ ամուսնութեան կարծեցեալ պիտակումներով, բայց իսկութեամբ՝ որպէս սպասուհիներ՝ հարուստ տուներու մէջ: Սիրարփին «կ՛որդեգրուի» հարուստ երիտասարդ այրիի մը՝ Տիկին Նեվրիկի մը կողմէ, որ «բարեսիրաբար» զինք կը գործածէ որպէս սպասուհի: Սակայն Տիկինը, տակաւին իր կանացիութեան վերջին փուլերուն մէջ՝ նոր սիրահարի մը կամ ամուսինի մը ձեռք ձգելու յաւակնութիւններ սնուցանելով, երբ կ՛իմանայ իր մէկ հեռաւոր երիտասարդ զարմիկին գալուստը իր մօտ, կը գիտակցի որբուհիին գեղեցկութեան եւ կը ծրագրէ որբուհին ամուսնացնել թաղի մէկ համեստ եւ տարիքոտ նպարավաճառին հետ, ձերբազատուելու համար վտանգաւոր մրցակիցէ մը: Բայց Սիրարփի կը մերժէ եւ կը նախընտրէ վերադառնալ որբանոցի դժխեմ պայմաններուն, քան թէ ամուսնանալ չսիրած անձին հետ::*

*Սիրարփիի եւ Օննիկի ամուսնութեամբ, Սեզա նաեւ կը սեւեռէ հայ նոր ընտանիքին վերընձիւղումը, ինչ փոյթ թէ օտար ափերուն վրայ, այն առաւելութեամբ որ, ինչպէս պիտի նախատեսէր հեղինակուհին Սիրարփիի բերնով. «Հայրենիքին այսքան մօտիկը, գրեթէ անոր եզրին, շուտով կը բազմանանք: Առողջ, կտրիճ, աշխատասէր սերունդ մը կը բուէ մեր տառապանքներուն վրէժին համար»:*

*Ի պատիւ Սեզային, պէտք է շեշտել, թէ ան շատ կանուխէն, հեռազգաց Հայրենիքի մը ֆիզիքական գոյութեան յոյժ կարեւորութիւնը եւ փարեցաւ նոր Հայաստանին, եւ աստանդական հայութեան փրկութեան փարոսը նկատեց զայն, փոխանակ «հոգեկան» երեւակայական հայրենիքի մը անորոշ բաւիղներուն մէջ զառածելու: Վկայ՝ նաեւ իր « Գաղթականին տղեկը» գողտրիկ պատմուածքը, ուր հայ գաղթական տղեկին կրած նուաստացումները իր օտար թաղեցի ընկերներէն կը խոցոտեն անոր մատղաշ հոգին: Բայց, մայրը պայծառատեսութիւնը կ՛ունենայ տղեկին վհատած աչքերուն առջեւ պարզելու նոր Հայաստանի ներշնչող յոյսը:*

*Այս բոլորով, Սեզա գրողը իր հիմնական նկարագրի գիծերով եւ կոչումի տեսլականով եղաւ ու մնաց վտարանդի հայութեան հոգերով ու ցաւերով տոչորուող, եւ նաեւ անոր վերածնունդին հաւատացող եւ նպաստող նուիրեալը: Այս առաքելութեան կողքին նաեւ ան եղաւ զտարիւն արուեստագիտուհի գրող, որ խորացումով եւ նրբութեամբ միանգամայն, գեղաճաշակ իր հայերէնին ուժականութեամբ պեղեց հայ եւ արաբ կիներու բազմածալք ներաշխարհն ու մտածումի ոլորտները եւ վերակերտեց իր կանացի աքանչելիօրէն քանդակուած տիպարները՝ «Շրջապատ», «Եասմինա», «Պատնէշը», «Անբացատրելին», «Լուիզ Մահտէսեան», եւ «Մեղաւորուհին» գեղակերտ պատմուածքներով: Իւրաքանչիւրը՝ իւրայատուկ կացութեան մը եւ հոգեխառնութեան մը ներքին տեսադաշտը պարզելով: Սէրը, հոն գերիշխան թեմայ է, իր բուռն թափով, նուիրուածութեամբ, քնքշութեամբ, երանութեամբ եւ նաեւ կիրքով ու նախանձով, վերջապէս մարդկային բոլոր զգացական տեսականիով կենդանացած: Իրեն համար, սիրելն ու սիրուիլը կանացի էական ու բնատուր պահանջ մըն է, հոգեկան աշխարհը ազնուացնող ու հարստացնող, որ սակայն յաճախ բախելով կարծր եւ անգիտակից շրջապատի մը նախապաշարումներուն, դրամի եւ անհասկացողութեան պատնէշներուն, կը կազմալուծուի եւ տեղի կու տայ ողբերգութեան, ինչպէս «Լուիզ Մահտէսեան», «Պատնէշը» եւ «Մեղաւորուհին» խորագիրով պատմուածքներուն մէջ: Մինչ «Անբացատրելին» պատմուածքի հերոսուհին իր անտեղի կասկածանքով եւ նախանձի իր հիւսած սարդոստայնով կը քանդէ իր եւ ամուսինին երջանկութիւնը: Խաբուած, պատրանաթափ եղած սիրոյ զոհեր են իր հերոսուհիները ընդհանրապէս, բայց անոնք մեր գութը չէ որ կը շարժեն, այլ կը խլեն մեր խոր համակրանքն ու հիացումը, հեղինակին կողմէ իրենց*

*Շար.ը էջ 19*

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ, ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԵԿԵԼ, Ո՞ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ.

## ՀԱՄՇԵՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ



*Համշենցիների թեման շարունակւում է օրակարգում մնալ թէ հայկական, թէ Թուրքիայի գիտական եւ քաղաքական շրջանակներում՝ Այս անգամ Akunq.net-ի թարգմանութեամբ ներկայացնում ենք համշենցի ուսումնասիրող Ջեմիլ Աքսուի ուսումնասիրութեան արդիւնքները:*

*Համշենցիները եւ համշենականութիւնը վերջին տարիներին գտնւում են աւելի ակնյայտ սոցիալական եւ քաղաքական հետաքրքրութեան կիզակէտում: Համշենցիների թեմայով տարուող քննարկումների եւ արուող հրապարակումների յաճախականացումը դրա ցուցանիշներից մէկն է: Թւում է՝ Համշէնի գաղտնիքը*, չնայեած այդ բոլոր բանավէճերին եւ հրապարակումներին, դեռեւս չի բացայայտուել: Ովքե՞ր են համշենցիները: Արդեօ՞ք դա մի անուանում է, որ տրուել է Ռիզեի Հեմշին եւ Ջամլըհեմշին բնակավայրերում ապրողներին, այնտեղացի եղողներին, թէ՝ տարբեր էթնիկ ինքնութիւն է, որը վերագրւում է ոչ թէ ի սկզբանէ մահմեդական եղած, այլ՝ հետագայում իսլամացած հայերին, որն արտայայտւում է հայերէնի բարբառներից մէկը համարուող համշեներէն խօսողներին: Իսկ գուցէ այս ամէնը միասի՞ն: Նրանց ծագումը թուրքակա՞ն է, թէ՝ հայկական: Եթէ նրանք թուրքեր են, ապա ինչո՞ւ են հաղորդակցւում հայերէնի բարբառներից մէկով: Իսկ եթէ հայեր են, ինչո՞ւ է նրանց ինքնանուանումը համշենցի: Ինչպիսի՞ կապ/տարբերութիւն կայ Խոպայի եւ Ռիզէի համշենցիների միջեւ: Ինչո՞ւ եւ ե՞րբ, որտեղի՞ց են եկել համշենցիները եւ ո՞ւր են գնացել: Այն փաստը, որ մինչ այժմ հնարաւոր չի եղել այս հարցերին ոչ մի պարզորոշ պատասխան տալ, շահարկումների տեղիք տուող մթնոլորտ է ապահովում: Սոյն համառօտ աշխատութիւնը պէտք է նախաբան համարուի՝ համշենցիների շուրջ կատարուող ուսումնասիրութիւնների եւ քննարկումների համար թեմայի սահմանները եւ համապատասխան խնդիրները մէջտեղ բերելու առումով:*

*Ներկայում Արեւելասեւծովեան շրջանի Արդվին, Ռիզէ, Տրապիզոն նահանգների բազմաթիւ գաւառներում, նաեւ այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Էրզրումը, Իզմիթը, Քոջաելին, առկայ են իրենց համշենցի անուանողների բնակավայրեր: Ընդհանրապէս ընդունուած է Թուրքիայում ապրող համշենցիներին աշխարհագրօրէն բաժանել երկու հատուածի՝ Արեւելեան Համշէնի եւ Արեւմտեան Համշէնի բնակիչներ: Արեւելեան Համշէնը բաղկացած է Արդվինի Խոպա եւ Բորչկա գաւառներում գտնուող համշենական գիւղերից: Սովորաբար ենթադրւում է, որ Արեւմտեան Համշէնն ընդգրկում է Ռիզէ նահանգի Ջամլըհեմշին, Հեմշին, Փազար, Իքիզդերէ, Ջայելի եւ Ֆընդըքլը գաւառների համշենական գիւղերը: Ենթադրւում է, որ այս աշխարհագրական բաժանումը միեւնոյն ժամանակ արտայայտում է լեզուական առումով մշակութային տարբերութիւն (1): Այն դէպքում, երբ Արեւմտեան Համշէնում թուրքերէն են խօսում, Արեւելեան Համշէնի համշենցիները հաղորդակցւում են երկու լեզուներով՝ թուրքերէնով եւ «Հոմշեցմա-համշեներէն» (համշեցնակ-Ակունքի խմբ.) կոչուող արեւմտահայերէնի մի խօսուածքով (2):*

*Բացի Թուրքիայից՝ առկայ են համշենցիների խմբեր, ովքեր բնակւում են նաեւ Կիրգիզիայում, Ղազախստանում, Աբխազիայում եւ Ռուսաստանում: Այս համշենցիները եւս բաժանւում են երկու ենթախմբի: Կիրգիզիայում եւ Ղազախստանում ապրող համշենցիները նրանք են, ովքեր Առաջին աշխարհամարտի վերջում ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ պետական սահմանի որոշումից յետոյ մնացել են Բաթումում ու վերջինիս շրջակայ բնակավայրերում, իսկ Երկրորդ աշխարհամարտից առաջ էլ աքսորուել են Կիրգիզիա եւ Ղազախստան. Նրանք հոմշեցմայով հաղորդակցուող մուսուլման համշենցիներն են: Ինչ վերաբերւում է Աբխազիայում ապրող համշենցիներին, ապա նրանց մի մասը՝ իրաւական պայքարի արդիւնքում, մի մասն էլ՝ ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ այս շրջան է գաղթել Կիրգիզիայից եւ Ղազախստանից (Կիրգիզիայից եւ Ղազախստանից գաղթած մահմեդական համշենահայերը բնակւում են Կրասնոդարի երկրամասում եւ Ռուսաստանի այլ շրջաններում, բայց ոչ Աբխազիայում-Ակունքի խմբ.): Նկատելի է, որ սոյն խմբի ներկայացուցիչները ազգակցական կապեր ունեն Խոպայի համշենցիների հետ: Ռուսաստանում (Կրասնոդար եւ Մոսկուա) ապրող, օսմանեան ժամանակաշրջանում Համշէնից հեռանալ հարկադրուած եւ մինչեւ 1915 Թուականը Սամսուն, Օրդու, Տրապիզոն եւ Գիրեսուն արտագաղթելով՝ այդ շրջաններում բնակուած, 1915 թ. կոտորածից (Ցեղասպանութիւնից-Ակունքի խմբ.) մազապուրծ լինելով՝ տուեալ շրջանում բնակութիւն հաստատած համշենցիները կազմում են մի քրիստոնեայ խումբ, որի մայրենի լեզուն հոմշեցման է (ճիշտ ձեւը՝ հոմշեցնակ-համշենահայերէն, Ակունքի խմբ.), եւ որը Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է:*

### Համշենականութիւն. լեզուն, ծագման խնդիրը եւ »մոռացութեան մատնուածները«

*Ինչպէս որ ակնյայտ է վերոշարադրեալ համառօտ դասակարգումից, բաւականին խրթին է թւում համշենցիների ինքնութիւնը միակողմանի (միայն էթնիկ, միայն մշակութային կամ միայն աշխարհագրօրէն) սահմանելը: Ռուսաստանում ապրող քրիստոնեայ համշենցիներն իրենց ընդունում են որպէս համշենահայեր: Այնինչ համշենցիների միւս խմբերը չեն կարողանում միեւնոյն յստակութեամբ իրենց բնորոշել: Համշենական ինքնութեան սահմանման հարցում հանդիպող ամենաէական դժուարութիւնը կապուած է լեզուի հետ: Լեզուն կարեւոր միջոց է՝ որեւէ ինքնութիւն բնորոշելու տեսանկիւնից, որովհետեւ որեւիցէ լեզուի առկայութիւնը պահանջում է էթնիկական ինքնութեան սահմանման ժամանակ օգտագործուող միւս միջոցների՝ համատեղ պատմութեան, միասնական հայրենիքի եւ այլնի առկայութիւնը (4): Ներկայում արեւմտեան համշենցիներից բացի միւս բոլոր համշենցիներն առօրեայ կեանքում կիրառում են հոմշեցմայ համշենահայերէն լեզուն: Համշեներէնի՝ հայերէնի բարբառներից մէկը լինելն ընդունուած փաստ է՝ այս ոլորտում ուսումնասիրութիւններ կատարած լեզուաբանների կողմից (5), իսկ արեւմտեան համշենցիները համշեներէնով շատ քիչ բառեր գիտեն, որոնք հիմնականում վերաբերւում են տեղանքին, կենցաղային իրերին, բուսական աշխարհին եւ այլն: Որոշ ուսումնասիրողներ (6) թէեւ Արեւմտեան Համշէնում բնակուողների թուրքերէնում յայտնագործում են համշեներէնից անցած փոխառեալ բառեր, սակայն պնդում են, թէ դրանք մնացել են տուեալ շրջանում բնակուած հայերից, եւ որ համշեներէնը երբեք չի եղել արեւմտեան համշենցիների մայրենի լեզուն: Միւս կողմից՝ որոշ ուսումնասիրողներ էլ (7) ենթադրում են, թէ համշեներէնը խօսուել է նաեւ Արեւմտեան Համշէնում, սակայն ներկայում լիովին մոռացուել: Թէեւ Խոպայի համշենցիներին յաջողուել է պահպանել համշեներէնը, Ռիզէի համշենցիների կողմից սոյն լեզուն «մոռացուած» լինելու վերաբերեալ վարկածը էական խնդիր է՝ կարօտ մեկնաբանութեան (8): Միւս կողմից՝ առկայ է հետեւեալ հարցը, որին երկու դէպքում էլ պէտք է ի սկզբանէ պատասխան տրուի, սակայն այն մնացել է յետին շարքում եւ առանձնապէս չի բարձրացւում. ի՞նչ է պատահել Համշէնում ապրող հայերին: Քանի դեռ այս հարցին պատասխան չի տրուել, համշենական ինքնութիւնը շարունակւում է քննարկուել ոլորտից դուրս անհանգստութիւններով եւ վախերով:*

*Խնդրահարոյց է նաեւ «արեւմտեան համշենցիներ» կամ էլ «Ռիզէի համշենցիներ» որակումը, հետեւաբար՝ անհրաժեշտ է այն բացատրել: «Ռիզէի համշենցիներ» սահմանումն ընդգրկում է հանրապետութեան հռչակման հետ մէկտեղ երկու գաւառի բաժանուած Համշէնի շրջանում ապրող եւ այնտեղացի եղող բոլոր բնակիչներին: Եթէ համշենական ինքնութիւնը բնորոշելու լինենք լեզուի միջոցով, ապա ճիշտ կը լինի այն, որ «արեւմտեան կամ Ռիզէի համշենցիների» մի մասը ոչ միայն «մոռացել է համշեներէնը, այլ երբեք չի էլ իմացել, քանզի պատմութիւնից տեղեակ ենք, որ օսմանեան տիրապետութեան ժամանակաշրջանում այս տեղանքում բազմաթիւ մուսուլման ընտանիքներ են բնակեցուել: Օսմանեան կայսրութեան յետընթացի շրջանում ակտիւացած իսլամացման ժամանակ եւ դրանից յետոյ՝ Հայոց ցեղասպանութեան ընթացքում, հայերից դատարկուած վայրերում շատ ընտանիքներ են բնակեցուել՝ գաղթականների վերաբնակեցման քաղաքականութեան շրջանակներում: Բացի այդ՝ յայտնի է, որ աւելի շուտ եւ ներկայում այստեղ լազեր եւ այլ տեղացի ու կովկասցի գաղթական ժողովուրդների ներկայացուցիչ ընտանիքներ էլ են ապրել (9): Հետեւաբար դժուար է թւում համշենական ինքնութեան այնպիսի սահմանումը, որը կը ներառի լեզուի կամ աշխարհագրութեան տեսանկիւնից իրենց համշենցի համարողներին: Առկայ են բազմաթիւ տարբերութիւններ՝ կրօնական, լեզուական, պատմական եւ այլ մշակութային տարրերի առումով: Համշենականութիւնը, որպէս էթնիկ ինքնութիւն, ընդգրկում է «արեւմտեան կամ Ռիզէի բոլոր համշենցիներին»: Որպէսզի բացայայտենք, թէ լազերէնով հաղորդակցուող/լազերէն իմացող լազերից բացի, մնացած համշենաբնակներից (այսինքն՝ Ջամլըհեմշինում եւ Հեմշինում ու միւս գաւառներում ապրողներից, այնտեղացիներից) ովքեր են էթնիկ ինքնութեան տեսանկիւնից համշենցի, ապա պէտք է ստուգենք օսմանեան ժամանակաշրջանում այս կողմերում կատարուած վերաբնակեցման մասին փաստաթղթերը եւ հրապարակենք ընտանիքների տոհմածառերը: Ռուսաստանաբնակ համշենցիների համար համշենականութիւնն արդէն իսկ նշանակում է այնտեղացի լինել, այնտեղից ծագել, եւ նրանք դուրս են էթնիկ ծագման վերաբերեալ բանավէճերից, քանի որ իրենց որպէս հայ են ընդունում եւ դաւանում Հայ առաքելական եկեղեցու հաւատքը:*

### Գորդեան հանգոյց. Խոպայի համշենցիները

*Համշենական ինքնութեան վերաբերեալ քննարկումներում բանալու դեր է կատարում Խոպայի համշենցիների դրութիւնը, որովհետեւ միայն վերջիններս են համշեներէն կամ հայերէն խօսում (ի նկատի ունի՝ Թուրքիայի սահմաններում-Ակունքի խմբ.): Այդուհանդերձ, դեռեւս որեւէ բացայայտուած տեղեկութիւն չկայ առ այն, թէ որտեղի՞ց (գուցէ Ջամլըհեշմինի՞ց), ինչո՞ւ եւ ե՞րբ են նրանք Խոպա եկել: Թէեւ Խոպայի համշենցիները տարբերուող լեզուի, սովորոյթների եւ աւանդոյթների շնորհիւ ակնյայտօրէն մի էթնիկական խմբի տպաւորութիւն են թողնում, սակայն նրանք այն-*

Շար.ը էջ 17

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՀԱՄՇԵՆՑԻՆԵՐԸ, ՈՐՏԵՂԻ՞Ց ԵՆ ԵԿԵԼ, Ո՞ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ.

## ՀԱՄՇԵՆՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

*Շարունակուած էջ 16-էն*

*քան չեն ուսումնասիրուել, որքան՝ Ռիզէի համշէնցիները: Պէտք է ուշադրութիւն դարձնել այն բանի վրայ, որ Խոպայի համշէնցիների մասին դաշտային աշխատանքներ իրականացրած «Բիրյաշամ» հանդէսը (10) էական քայլ է կատարել այս առումով: Յիշեալ ամսագրում հրատարակուած բանահիւսական նիւթերն ու յօդուածները, ինչպէս նաեւ՝ հարցազրոյցները մեզ կարեւոր տեղեկութիւններ են հաղորդում Խոպայի համշէնցիների վերաբերեալ:*

*Որեւէ գրաւոր աղբիւր չկայ առ այն, թէ երբ, ինչ պատճառներից ելնելով եւ որ ճանապարհով են Խոպա եկել այստեղի համշէնցիները: Նիւթի վերաբերեալ վերջերս հաւաքուած բանաւոր տեղեկութիւնները դեռեւս շատ խորանալու հնարաւորութիւն չեն տալիս նրանց նախկին բնակավայրերի վերաբերեալ ուսումնասիրութիւն անելիս: Խոպայի գիւղերում մեր կողմից կատարուած ուսումնասիրութեան ընթացքում հնարաւոր չի եղել հաւաստ լինել բազմաթիւ ընտանիքների երրորդ-չորրորդ սերունդների պապերի մասին տեղեկութիւնների (Խոպայի ամենամեծ համշէնական գիւղը եղող Բաշոբայում գտնուել է օսմանեան ժամանակաշրջանին պատկանող 5 գերեզմանոց):*

*Տուեալ շրջանում 1640 թ. շրջած Էվլիիա Չելեբին յայտնել է, թէ այստեղի բնակիչների մեծ մասը լազ է եղել, մի մասն էլ՝ յոյն (11): Ֆահրեթթին Քըրզըօղլուն, սուլթան Սելիմ Ահեղի ժամանակաշրջանի «Տրապիզոն սանջակի մանրամասն գոյքամատեանների» (1516 թ.) վրայ հիմնուելով, յայտնում է, թէ այդ տարիներին Խոպան եղել է Արհավիին ենթակայ մի գիւղախումբ (Նահիյէ), եւ որ այս կողմերում բնակուող 23 քրիստոնեայ «ռաեաներ» որպէս «մարթոլոս» (12) էին գրանցուել (13): Քըրզըօղլուն, «Տրապիզոն սանջակի մանրամասն գոյքամատեանների» վրայ հիմնուելով, «Լազ գիւղախմբի վերաբերեալ» նշում է, թէ այն բաղկացած է եղել 35 գիւղերից, Արխավեն, Վիչեն, Խոպան, Մաքրիիալուն, Միսոփոթամեան, Յաքովիդն էլ ներառեալ (14): Ինչ վերաբերում է «Բագոբիթ վիլայեթին», որը Չեքի Քոդայի աշխատութեան մէջ նշւում է, թէ Բաշոբան է, ապա Քըրզըօղլուն, նոյն փաստաթղթի վրայ հիմնուելով՝ հաղորդում է. «Բագոբիթ վիլայեթը, որը մատեանում չի յիշատակւում, գտնւում է Խոպայի եւ այժմեան սահմանին մօտ Քեմալփաշայի (Մաքրի-եալու) միջեւ. ընդհանուր թուով 5ի հասնող գիւղերի (Բաշքյոյ, Էսենքըյը, Յոլդերէ, Ջավուշլու, Քոինջուլար-Չեքի Քոդայ) եկամուտը թողնուել է տեղացի քրիստոնեայ «մարթոլոսներին» (15): Քըրզըօղլուն, վերոյիշեալ փաստաթղթի վրայ հիմնուելով, 1966 թ. «Թուրքական բանահիւսութեան ուսումնասիրութիւններ» ամսագրում հրատարակուած իր յօդուածում հետեւեալ կերպ է ներկայացնում «Բագոբիթ վիլայեթի» գիւղերը. «1. Բագոբիթ, բնակչութիւնը՝ քրիստոնեայ, մարթոլոսների թիմար: 2. Լուխաբեայ, մարթոլոսների թիմար: 3. Էրչիդ, մարթոլոսների թիմար: 4. Շոխխիբէ, մարթոլոսների թիմար: 5. Աբըս-Ջինէ, մարթոլոսների թիմար: 6. Բախո» (16): Չեքի Քոդայը հաղորդում է, թէ Քեմալփաշան 1486 թ. բաղկացած է եղել 47 տուն քրիստոնեաներից, եւ որպէս Յագոբիթ գաւառակ անուանուող (Բաշոբա-Խոպա) կենտրոնում գտնուել են 68 տներ, բացի այդ՝ 1515 թ. այդ կենտրոնը դեռ նոր է հիմնուել: Նոյն մատեանում նաեւ նշւում է, թէ 1520 թ. Յագոբիթը (Բաշոբա) եւ Իսքելեն (Խոպա) գիւղախմբերի կենտրոններ են եղել, եւ որ Յագոբիթը բաղկացած է եղել մէկ կենտրոնից ու 6 գիւղից, իսկ Իսքելեն (Խոպան)՝ մէկ կենտրոնից եւ 8 գիւղերից (17):*

*Վերոնշեալ տեղեկութիւններից պարզ է դառնում, որ 1515 թ. նորաշէն մի գիւղ հանդիսացող Բաշոբայի բնակիչները լազեր ու յոյներ են եղել: Բանաւոր պատմութեան ուսումնասիրութիւնները եւս ամրապնդում են այն տեղեկութիւնը, ըստ որի՝ Բաշոբայի տարածքները լազերից են անցել համշէնցիներին: Յայտնի է, որ այսօր համշէնցիներով բնակեցուած որոշ գիւղեր դեռ կրում են լազ տէրերի անունները: Լազերէն են նաեւ որոշ համշէնական գիւղերի անուանումներ (օրինակ՝ Յոլդերէի նախկին անուանումը Ժիւրփիջի է, որը (լազերէն) նշանակում է «երկու եղբայր»): Նմանապէս հնարաւոր չէ պնդել, թէ հաւաստի տեղեկութիւններ կան համշէնցիների՝ դէպի Խոպա գաղթի ժամանակաշրջանի վերաբերեալ: Համշէնցիների վերաբերեալ կատարուած պատմական ուսումնասիրութիւնները եւս ցոյց են տալիս, որ իսլամացման գործընթացի ժամանակ Համշէնից արտագաղթը եղել է դէպի արեւմուտք:*

*Կարելի է ենթադրել, որ համշէնցիներն իսլամի ազդեցութեան տակ են ընկել 15-րդ դարից սկսած, երբ Տրապիզոնից մինչեւ արեւելասեւծովեան բոլոր շրջաններն անցել են Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ, սակայն սոյն գործընթացի վերաբերեալ բաւարար տեղեկութիւններ չկան: Ընդհանուր կարծիքի համաձայն՝ իսլամացման գործընթացն աւարտուել է 18-րդ դարի կէսերին, իսկ քրիստոնեայ մնալ նախընտրածները տարածուել են Սեւ ծովի առափնեայ քաղաքներում, հիմնականում՝ Տրապիզոնում (18):*

*Համշէնցիների իսլամացման գործընթացի վերաբերեալ ոչ վաղ անցեալում մի կարեւոր փաստաթուղթ է հրապարակուել Սերգէյ Վարդանեանի կողմից (19): Վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ Պօղոս վարդապետ Մեհերեանն իր ինքնակենսագրական գրքում պատմում է Համշէնում գտնուող Խեւաք գիւղ իր այցի եւ այնտեղ իր հետ պատահածների մասին. «Առի ընդ իս զտէր Պետրոսն, զնոր[ը]նծայ տէր Աւետիսն եւ զհամշէնցի տէր Սերոբէն եւ չոգայ ի Համամաշէն՝ ի գիւղն <ի գիւղն> Խէվակ (...): ...եւ մինչ մտաք ի գիւղն, արք եւ կանայք գեղջն, որք թուրքացեալք էին, յաջմէ եւ յահեկէ համբուրէին զաջն իմ, ուր իջեւանեցաք ի տուն Նոր[ը]նծայ Սերոբէին, որ ունէր հօրեղբարք, եւ չէն էին: Ջառաջին ի տան սեղան կազմեցի եւ պատարագեցի ես, տէր Պետրոս եւ տէր Աւետիս, եւ գային ի տան տաճկացեալք՝ տեսանել պատարագ: Հարցի ցնոսա թէ՝ Գոյ աստ եկեղեցի, ասացին՝ Այո, գոյ, բայց աւերակ է: Եւ մինչ տեսի զեկեղեցին դիւրին էր կարկատել, իսկոյն կարկատեցի, մաքրեցի հինգ վեց արամբք. եւ ապա զանշարժ վէմ սեղանոյն լուացի ջրով եւ գինեաւ, քանզի օծեալ էր եւ դուռն փակեալ էր, ոչ ոք մտեալ կամ ելեալ էր սորըս. վասն օրհնեցի եւ պատարագեցաք երեք [ք]ահանայքս: Եւ տես դու, զի ուրացեալքն ի ժամ պատարագին լնուին զեկեղեցին...» (20):*

*(Շարունակելի)*

************

*«Համշէնի զաղտնիքը»- 1996 թ. Բելգէ հրատարակչատան կողմից՝ Լեւոն Խաչիկեանի «Թերթեր համշենահայերի պատմութիւնից» գրքի թուրքերէն հրատարակմանը տրուած անուանումը:

1. Գիւլսէն Բալըքչը, «Ռիզե-Փազար/Աքբուջաք, Օրթայոլ եւ Ուղրաք գիւղերի էթնիկ կառուցուածքը» վերնագրով հրատարակուած ատենախօսութիւն, Անքարա, Անքարայի համալսարանի հրատարակչութիւն, 1997, էջ 43; Լեւոն Խաչիկեան, «Համշէնի զաղտնիքը», Ստամբուլ, Բելգէ հրատարակչութիւն, 1996, էջ 53; Ալի Գիւնդիւզ, «Համշենցիները», Անքարա, Արդանուչի մշակոյթի համերաշխութեան միութիւն, 2002, էջ 54; Պիթեր Էնդրիուս, «Էթնիկ խմբերը Թուրքիայում», Ստամպուլ, «Անթէ հրատարակչութիւն, 1992, էջ 181-182; վերջին յղումը վերցուած է Այշենուր Քոլիվարի «Մտորումներ մի համշենական գիւղում խօսուող թուրքերեն խօսուածքի շուրջ» յօդուածից;http://www.biryasam.com.tr/Detay/39, կայքից օգտուել ենք 2012 թ. Փետրուարի 25-ին /թուրքերէն/:

2. Այշենուր Քոլիվար, նոյն տեղում:

3. Բեր Վօ, «Համշենցի. մոռացուած սեւ ծովեան հայերը», «Հայագիտական ուսումնասիրութիւնների հանդէս» /անգլերէն/, Յղումը վերցուած է ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի կողմից հրատարակուած՝ ՀԱՄՇԷՆ ԵՒ ՀԱՄՇԷՆԱՀԱՅՈՒԹԻՒՆ (գիտաժողովի նիւթեր),ԵՐԵՒԱՆ - ՊԷՅՐՈՒԹ, 2007 /թուրքերեն հրատարակութիւնը/ վերնագրով յօդուածների ժողովածուից, Երեւան, 2007 /թուրքերէն/:

4. Քեմալ Ինալ, «Լեզուն որպէս քրտական հարցի էական չափանիշ», «Կրթութիւն, գիտութիւն, հասարակութիւն» հանդէս, հատոր 10, համար 37, 2012, էջ 79:

5. Բեր Վօ, «Հոմշեցմա՝ համշենահայերի լեզուն», «Համշենը», կազմող՝ Հ.Հ. Սիմոնեան, էջ 257-278 /անգլերէն/; Ժորժ Դիոմեզիլ, «Հայկական ուսումնասիրութիւնների հանդէս» /ֆրանսերէն/, յղումը վերցուած է Լուսինէ Սահակեանի «Համշենի միկրոտեղանունները» գրքից, Երեւան, ԵՊՀ հրատարակչութիւն, 2012 թ., էջ 67-69:

6. Ալի Գիւնդիւզ, «Համշենցիները», Անքարա, Արդանուչի մշակոյթի համերաշխութեան միութիւն, 2002, էջ 68; Օրքուն Յաման, «Էթնիկականութեան եւ Համշենի շուրջ», «Հալքիլիմի» հանդէս, թիւ 7, 1998 թ., էջ 56 /թուրքերէն:

7. Լեւոն Խաչիկեան, «Համշենի զաղտնիքը», Ստամպուլ, Բելգէ հրատարակչութիւն, 1996, էջ 55 / թուրքերէն/:

8. Սոյն խնդրի շուրջ կատարուած իւրայատուկ ուսումնասիրութիւններից մէկն էլ Այշենուր Քոլիվարի «Մտորումներ մի համշենական գիւղում խօսուող թուրքերէն խօսուածքի շուրջ» վերնագրով յօդուածն է:

9. Մ. Հանեֆի Բոսթան, «Ժողովրդագրական շարժումները եւ բնակչութեան էթնիկ կառուցուածքը Սեւ ծովեան շրջանում», «Նիրբեթչի» հրատարակչութիւն, 2012, էջ 397 /թուրքերէն/:

10. 2008 թ. Խոպայում հրատարակուել սկսած «Բիրիաշամ» տեղական պատմութեան, բանահիւսութեան, կենսագրութեան եւ աշխարհագրութեան հանդէսը տպագրուել է 13 համարով: Մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար այցելէք ամսագրի կայք՝http://www.biryasam.com.tr/:

11. Էվլիիա Չելեբի, «Ուղեգրութիւն», 3-րդ հատոր, յղումը վերցուած է Չեքի Քոդայի «Խոպա գաւառի աշխարհագրութիւնը» վերնագրով հրատարակուած ատենախօսական աշխատութիւնից, Աթաթուրքի անուան համալսարանի Սոցիոլոգիայի ինստիտուտի աշխարհագրութեան մասնաճիւղ, Էրզրում, 1995 /թուրքերէն/:

12. Մարթոլոս- Այս անունը տրուած է այն անձանց, ովքեր քրիստոնեայ հպատակներ լինելով, աշխատել են Օսմանեան պետութեան սահմաններում եղած շրջաններում: Մարթոլոսներն աշխատեցուել են այնպիսի գործերում, ինչպիսիք են՝ հետախուզութիւնը, հացահատիկների փոխադրումը, անցումային կէտերի, հասարական կարգի եւ փոքր ամրոցների պահպանութիւնը:

13. Ֆահրեթթին Քըրզըօղլու, «Կովկասյան ժողովուրդների նուաճումը օսմանցիների կողմից (1450-1590)», Թուրքական պատմագիտական ընկերութեան հրատարակչութիւն, 1998 թ., էջ 12 /թուրքերէն/:

14. Նոյն տեղում, էջ 48:

15. Նոյն տեղում, էջ 49:

16. Ֆահրեթթին Քըրզըօղլու, «Խոպա եւ Արհաւի գիւղերը Սելիմ Առաջինի դարաշրջանում», Թուրքական բանահիւսական ուսումնասիրութիւններ, Ստամպուլ, 1966 թ. Ապրիլ, հատոր 10, էջ 201 /թուրքերէն/:

17. Մ. Հանեֆի Բոսթան, «Տրապիզոնի սանջակի /մարզի/ սոցիալ-տնտեսական կեանքը 15-16-րդ դարերում», չհրատարակուած ատենախոսական աշխատութիւն, Մարմարա համալսարանի Թուրքագիտական ուսումնասիրութիւնների ինստիտուտ, էջ 194-195, յղումը վերցուած է Չէքի Քոդայի ուսումնասիրութիւնից /թուրքերէն/:

18. Լեւոն Խաչիկեան, նշ. աշխ., էջ 57-59:

19. Սերգէյ Վարդանեան, «ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՄՇԷՆԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ 1776 թ. ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆ»,ՀԱՄՇԷՆ ԵՒ ՀԱՄՇԷՆԱՀԱՅՈՒԹԻՒՆ (գիտաժողովի նիւթեր), ԵՐԵՒԱՆ - ՊԷՅՐՈՒԹ, 2007 /թուրքերէն հրատարակութիւնը/, էջ 278:

20. Յղումը վերցուած է Սերգէյ Վարդանեանի վերոյիշեալ աշխատութիւնից, էջ 283: Յօդուածում հանդիպող՝«թուրքացած» արտահայտութիւնն ակներեւ կերպով օգտագործուած է «իսլամացածներ» իմաստով:

## «ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»

*Շարունակուած էջ 7-էն*

պետ եկեղեցւոյ ժրաջան հովիւ՝ Մանուկ Աւ. Քհնյ. Մարգարեան: Ան խօսելով Յովնան Սրբազանի մասին ընդգծեց «Յովնան Արք. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այն բարձրորակ հոգեւորականներից է, որի համար գիշեր չի կայ. այլ՝ միշտ ցերեկ է: Նա իր գրելու տաղանդով, նման չունի միւս ճանաչած հոգեւորականների մէջ: Որեւէ մի ձեռնարկի ժամանակ Սրբազանը չէք տեսնի ձեռքերը ծալլած: Միշտ գրում է...»:

Գործադրուեցաւ գեղարուեստական ճոխ յայտագիր մը: Դասական քանի մը գլուխ գործոցներու կատարումներով հանդէս եկան շնորհալի արուեստագէտ երգչուհիներ՝ Լիանա Ստեփանեան, Տաթիկ Մավեան, Զեմֆիրա Դանիէլեան, ինչպէս նաեւ ջութակահար Արմէն Անասեան, դաշնամուրի ընկերակցութեամբ Խաչիկ Քիւրճեանի:

Գերշ. Յովնան Սրբազան իր ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց այս վերջին գիրքի մեկենասներ՝ Տօքթորներ՝ Տէր եւ Տիկ. Պետրոս եւ Կարինէ Տաղլեաններուն, որոնք ագնիւ գտնուած էին «Ապրուած Կեանքի Յուշեր» հատորը ձօնելու իրենց եղբօր՝ Տօքթ. Եղիա Տաղլեանի յիշատակին: Առաջնորդ Յովնան Արք. միաժամանակ բարձր գնահատեց Տաղլեան ընտանիքի անդամներուն ամբողջական սէրն ու նուիրումը հայ մշակոյթին եւ եկեղեցիին հանդէպ: Ան մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց նաեւ այս յիշատակելի միջոցառումի պատրաստութեան սատարողներուն եւ յայտագրի մասնակիցներուն: Խօսելով իր գրելու յատկութիւններուն մասին Յովնան Սրբազան նշեց որ՝ գրել սկսած է 30-ականներուն: Իր ներշնչումի աղբիւրը՝ ատաղագարդ երկինքն ու երկխօսութիւնն է Աստուծոյ հետ: «Իմ սկզբունքն է հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը: Այս գիրքը դարձաւ նաեւ իմ կեանքի կենսագրութիւնը: Կեանք մը՝ որ կը միտի ծառայել իմ ժողովուրդին եւ եկեղեցիին: Իսկ դուք եղած էք իմ կեանքի համն ու հոտը» եզրակացուց Սրբազանը:

Գինեձօնի աւանդական արարողութենէն ետք տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն, որու ընթացքին ներկաները իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղթութիւնները փոխանցեցին Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանին:

## ԱՐԺԱՆԻՆ ԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԵՑԱՒ ԱՐԺԱՆԱՒՈՐԱՊԷՍ

*Շարունակուած էջ 7-էն*

Ամենապատիւ Պատրիարքը յուշամետալով պարգեւատրեց Մելգոնեանը:

Հանդիսութեան փակման խօսքէն եւ եւ Պահպանիչէն առաջ, Յոբելեար Նահապետ Մելգոնեան հանդէս եկաւ սրտառուչ Որդիական Շնորհակալական Խօսքով: Ան շնորհակալութիւն յայտնեց Ամենայն Հայոց Հայրապետ Ն. Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Ին՝ իրեն շնորհած Սրբ. Սահակ-Սրբ. Մեսրոպ պատուոյ բարձր շքանշանին համար, Ամենապատիւ Տ. Պատրիարք Հօր՝ հանդիսութեան նախագահելուն, ներկայութեան եւ իրեն մատուցած շքանշանին համար, ՀՀ Լոս Անճելըսի Գլխաւոր Հիւպատոսութեան եւ Յովնան Արք.ին՝ Յոբելինական հանդիսութիւնը հովանաւորելուն համար, Գալիֆորնիոյ Նահանգի պետական անձնաւորութիւններու գնահատագիրներուն համար եւ Իրանահայ Միութեան՝ սրահը տրամադրելուն համար:

Յոբելեարը իր շնորհակալութիւնը յայտնեց օրուան յայտագրին իրենց գեղուցաբեր մասնակցութիւնը բերողներուն, մամլոյ ներկայացուցիչներու եւ ներկայ հանդիսատեսներու, եզրափակելով իր խօսքը, թէ ինք պիտի շարունակէ իր ծառայութիւնը հայ գիրին, մշակոյթին, Սրբ. Էջմիածնին, Երուսաղեմայ Պատրիարքութեան, ազգին ու հայրենին մինչեւ իր կեանքի աւարտը:

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու աշխատակազմը, իրեն կարգին, կը շնորհաւորեն իրենց աւելի քան տասնամեայ աշխատակիցին՝ յոբելեար Նահապետ Մելգոնեանի Գրական, Մշակութային եւ Եկեղեցանուէր 40-ամեայ ծառայութեան նուիրուած յոբելինական հանդիսութեան բարեբաստիկ առիթով, մաղթելով իրեն՝ քաջառողջութիւն, արեւշատ եւ բեղմնաւոր տարիներ:

Վարձքդ կատար, սիրելի Նահապետ:

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

*Շարունակուած էջ 14-էն*

պիտի ծանօթանան քրիստոնէական ուսուցման հետ առնչուող ծրագիրներուն, ցարդ կատարուած աշխատանքներուն, Հայ Ինքնութեան ծրագրին, ձայնասփիւռի յայտագիրներուն, կայքէջին եւ հրատարակութեանց: Այցելուները հանգամանօրէն պիտի տեղեկանան Առաջնորդ Սրբազան հօր հեղինակած գիրքերուն եւ Առաջնորդարանի կողմէ հրատարակուած հատորներուն: Տասնամեակին նուիրուած ձեռնարկները պիտի աւարտին Կիրակի, Նոյեմբեր 24-ի Ս. Պատարագով, որուն ընթացքին Կաթողիկոսական Կոնդակի պիտի արժանանայ Դատաւոր Էտրիէն Գրիգորեան, իսկ յետ Պատարագի Առաջնորդարանի համալիրէն ներս պիտի գործադրուի գեղարուեստական յայտագիր կատարողութեամբ թեմէն ներս գործող երգչախումբերուն եւ պարախումբերուն:

Յովնան Արք. Տէրտէրեան կ'ըսէ՝ Թեմին հզօրութիւնը ճշգրտուած ուղղուածութեան մէջ կը կայանայ: Մեր թեմը կ'ընթանայ ճիշդ ուղիով, վկայ անոր վայելած հեղինակութիւնը ոչ միայն համայնքին մէջ, այլեւ պետական շրջանակներէ ներս, սկսելով քաղաքային մակարդակէն, հասնելով մինչեւ Նահանգիս մայրաքաղաքը՝ Սաքրամենթօ:

### ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

«Քաջ Նազար» երգիծաթերթի խմբագիր եւ հրատարակիչ Յովհաննէս Պալայեան վերջերս ենթարկուած է վիրաբուժական լուրջ գործողութեան մը եւ այժմ կը բոլորէ իր ապաքինման շրջանը: «Մասիս» կատարեալ եւ շուտափոյթ ապաքինում կը մաղթէ իրեն:

## ԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

*Շարունակուած էջ 8-էն*

-Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

-Ռամկավար Ազատական Կուսակցութիւն

-Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն

-Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն

-Արեւմտեան ԱՄՆի Հայ Օգնութեան Միութիւն

-Արեւմտեան ԱՄՆ-ի Հայաստան Համահայկական Հիմնադրամ

- Միացեալ Հայկական Հիմնադրամ

-Ամերիկայի Հայկական Համագումար

-Արեւմտեան ԱՄՆ-ի Հայ Դատի Յանձնախումբ

-Հայ Իրաւանց Խորհուրդ

-Հայ Ամերիկեան Խորհուրդ

-Հարաւային Գալիֆորնիոյ Համալսարանի Հայագիտական Ինստիտուտ

-Հայ Իրաւաբանական Միութիւն

-Միացեալ Հայ Երիտասարդներ

Շրջանի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Յանձնախումբը հիմնուած է 9 Օգոստոս 2012ին, համակարգելու՝ 2015ին տեղի ունենալիք Հայոց Ցեղասպանութեան ոգեկոչման բազմաբնոյթ աշխատանքներն ու ձեռնարկները:

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի Յանձնախումբի անդամ կազմակերպութիւնները հաստատած են յանձնախումբի հետեւեալ առաքելութիւնը՝

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակը կը շեշտէ աշխարհասփիւռ հայութեան եւ բոլոր բարի կամքի տէր մարդոց պահանջատիրական պայքարը՝ յանուն արդարութեան:

2015 թուականին պիտի յիշատակուի 20-րդ դարու մարդկութեան դէմ գործուած մեծագոյն յանցագործութիւններէն մէկը՝ Հայոց Մեծ Եղեռնը: 1915-ին Թուրքիոյ կառավարութիւնը սկսաւ իր կանխամտածուած եւ համակարգուած արշաւը՝ արմատախիլ անելու հայ բնակչութիւնը իր հայրենիքէն, կոտորելով 1,5 միլիոն անպաշտպան տղամարդոց, կիներուն եւ երեխաներուն:

Թուրքիան պէտք է վերջապէս ընդունի Հայոց Ցեղասպանութիւն իրագործած ըլլալու իր պատասխանատուութիւնը եւ պէտք է համապատասխան բարոյական, նիւթական եւ տարածքային փոխհատուցումներ տայ, ըստ հիմնարար միջազգային նորմերի ու քաղաքակիրթ հասարակութեան օրէնքներուն:

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի Արեւմտեան ԱՄՆի Յանձնախումբ

Գործադիր Յանձնախումբ՝

Կարօ Ղազարեան, համանախագահ

Յարութ Սասունեան, համանախագահ

Թալին Եագուպեան, համանախագահ

Թոմիկ Ալեքսանեան, գանձապահ

Լենա Պօզոյեան, քարտուղար

**UNITED STATES POSTAL SERVICE** — Statement of Ownership, Management, and Circulation (All Periodicals Publications Except Requester Publications)

| | | |
|---|---|---|
| 1. Publication Title: MASSIS WEEKLY | 2. Publication Number: 0 6 6 7 - 3 1 0 | 3. Filing Date: 10-16-13 |
| 4. Issue Frequency: WEEKLY, except two weeks in August | 5. Number of Issues Published Annually: 50 | 6. Annual Subscription Price: $50 |
| 7. Complete Mailing Address of Known Office of Publication: 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104 | | Contact Person / Telephone (Include area code): (626) 797-7680 |

8. Complete Mailing Address of Headquarters or General Business Office of Publisher: 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

9. Full Names and Complete Mailing Addresses of Publisher, Editor, and Managing Editor

Publisher: SDHP 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

Editor: DR. ARSHAG KAZANJIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

Managing Editor: VAHE ACHADANIAN 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

| | | | |
|---|---|---|---|
| a. Total Number of Copies (Net press run) | | 3,500 | 3,500 |
| b. Paid Circulation (By Mail and Outside the Mail) | (1) Mailed Outside-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 123 | 123 |
| | (2) Mailed In-County Paid Subscriptions Stated on PS Form 3541 (Include paid distribution above nominal rate, advertiser's proof copies, and exchange copies) | 383 | 383 |
| | (3) Paid Distribution Outside the Mails Including Sales Through Dealers and Carriers, Street Vendors, Counter Sales, and Other Paid Distribution Outside USPS® | 2,400 | 2,400 |
| | (4) Paid Distribution by Other Classes of Mail Through the USPS (e.g. First-Class Mail®) | 66 | 66 |
| c. Total Paid Distribution (Sum of 15b (1), (2), (3), and (4)) | | 2,972 | 2,972 |
| d. Free or Nominal Rate Distribution (By Mail and Outside the Mail) | (1) Free or Nominal Rate Outside-County Copies included on PS Form 3541 | 40 | 40 |
| | (2) Free or Nominal Rate In-County Copies Included on PS Form 3541 | 35 | 35 |
| | (3) Free or Nominal Rate Copies Mailed at Other Classes Through the USPS (e.g. First-Class Mail) | | |
| | (4) Free or Nominal Rate Distribution Outside the Mail (Carriers or other means) | 300 | 300 |
| e. Total Free or Nominal Rate Distribution (Sum of 15d (1), (2), (3) and (4)) | | 375 | 375 |
| f. Total Distribution (Sum of 15c and 15e) | | 3,347 | 3,347 |
| g. Copies not Distributed (See Instructions to Publishers #4 (page #3)) | | 153 | 153 |
| h. Total (Sum of 15f and g) | | 3,500 | 3,500 |
| i. Percent Paid (15c divided by 15f times 100) | | 88.7% | 88.7% |

16. Publication of Statement of Ownership

☐ If the publication is a general publication, publication of this statement is required. Will be printed in the ______ issue of this publication.

☐ Publication not required.

**www.massispost.com**
**daily news updates**

## ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ 110-ԱՄԵԱԿ

*Շարունակուած էջ 14-էն*

*խումբին յաջորդ գեղարուեստական ղեկավարները՝ Կոստանդին Բաղդասարեանը (1975-էն), Ռուբէն Ահարոնեանը (1982-էն) եւ Արամ Ղարաբեկեանը (1997-էն): 2011-ին ՀՊԿՆ-ի գեղարուեստական ղեկավար ՝ գլխաւոր դիրիժոր նշանակուած է՝ Վահան Մարտիրոսեանը:*

*Այս ամառ, Հայաստանի Պետական Կամերային Նուագախումբը Արամ Խաչատրեանի 110-ամեակին առթիւ մասնակցեցաւ Ֆրանսայի եւ Զուիցերիոյ մէջ կազմակերպուած շարք մը միջազգային փառատօններու:*

- Ներկայիս դուք կ'ապրիք Ֆրանսա եւ հոն կը ղեկավարէք սիմֆոնիք այլ նուագախումբեր ալ: Ձեր նուագախումբերը հայ երգահաններու ստեղծագործութիւններ ալ կը կատարե՞ն:

***- Ֆրանսիայում եւ այլուր բազմաթիւ անգամներ կատարել եւ կատարելու եմ հայ կոմպոզիտորների ստեղծագործութիւններ:***

- Դուք որպէս դաշնակահար թէ խմբավար նախապէս հիւրախաղերով հանդէս եկա՞ծ էք Լոս Անճելըսի մէջ:

***- Հիւրախաղային առաջին այցելութիւնն է Լոս Անջելըս, իսկ ԱՄՆ-ում ելոյթներ են եղել Նիւ Եորք (Քարնէկի Հոլլ) եւ Ֆրեզնօ՝ ե՛ւ իբրեւ դիրիժոր եւ իբրեւ դաշնակահար:***

- Ինչպէ՞ս բացատրել ընթերցողներուն Կամերային, Սենեկային նուագախումբը: Նմանութիւններն ու տարբերութիւնները Սիմֆոնիք նուագախումբի, օրքեսթրայի հետ:

***- Արդէն իսկ անունը յուշում է Սենեկային, այսինքն սենեակային: Սիմֆոնիք նուագախումբը կամերային նուագախմբի ընդլայնուած տարբերակն է, որտեղ, ի տարբերութիւն կամերային նուագախմբի, մեծ տեղ է տրուած փողային եւ հարուածային գործիքներին: Կամերային նուագախմբում իր փոքր չափերի պատճառով իւրաքանչիւր երաժշտի վարպետութիւնը մեծ կարեւորութիւն ունի:***

- Գոյութիւն ունի՞ արդեօք քաղաքականութիւն մը, ուղեգիծ մը, որպէսզի հայկական դասական երաժշտութիւնը լայնօրէն տարածուի տարբեր երկիրներու մէջ:

***- Մեծ անհրաժեշտութիւն կայ այդ քաղաքականութիւնն ունենալու, սակայն դեռեւս քարոզւում է շատ անորակ եւ կասկածելի «հայկական» երաժշտութիւն: Իսկ Մոցարտ կատարելով ոչ թէ քարոզւում է աւստրիական երաժշտութիւն, այլ համամարդկային հանճարը:***

- Ինչպէ՞ս կրնայ աջակցիլ արտասահմանի, եւ յատկապէս Ամերիկայի հայ համայնքը, որպէսզի աշխարհին ըստ արժանւոյն ներկայացուին Հայաստանի երաժշտական լաւագոյն կատարողական նուագախումբերու եւ հայ երգահաններու ստեղծագործութիւնները:

***- Կարծում եմ, որ այն ինչ դուք այժմ անում էք, ի դէմս ձեզ, վառ ապացոյցն է հայ համայնքի դրական վերաբերմունքին երաժշտութեան եւ կատարողների նկատմամբ: Այսպիսի ակցիաները բազմապատկելով, յուսով եմ, որ սփիւռքի աջակցութեամբ մենք կը կարողանանք բաց ճակատով մեր ստեղծագործական եւ կատարողական վարպետութիւնը ներկայացնել համաշխարհային խստապահանջ ունկնդրին:***

- Յաջողութիւններ եւ դժուարութիւններ անշուշտ թէ կան. օրինակ՝ հովանաւորներ, ֆինանսական վիճակ, աշխատավարձ, գործիքներու պահանջք...

***- Այն ինչ նշում էք, կազմում են մեր ամենակարեւոր խնդիրները, իսկ յաջողութիւնների մասին վկայում են մեր լեցուն դահլիճների ունկնդիրները:***

- Այս այցելութեան շարժառիթը Արամ Խաչատրեանի յոբելեանն է: Ինչպէ՞ս ծնունդ առին այս հիւրախաղերը Միացեալ Նահանգներու մէջ:

***- Ամերիկայի Միացեալ Նահանգներում Արամ Խաչատրեանի 110-ամեայ յոբելեանական համերգները նախաձեռնուեցին գործակցութեամբ ամերիկեան International Competitions and Festivals, Inc. կազմակերպութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Մշակոյթի Նախարարութեան: Այս շրջանակներում արդէն իսկ յաջողութեամբ ելոյթներ ենք ունեցել Ֆրանսիայում եւ Շվէյցարիայում եւ մեր նուագախմբի համար շատ հաճելի է այս համերգաշարն աւարտել ԱՄՆ-ի բազմահազարանոց հայ ունկնդրի առաջ:***

- Նոր ծրագիրներ, մարտահրաւէրներ:

***- Ունենք բազմաթիւ հիւրախաղերի հրաւէրներ Եւրոպայից, աշխարհի շատ երկրներից եւ Հայաստանի մարզերից:***

- Շնորհակալութիւն մայէսթրօ Մարտիրոսեան: Ձեզի կը մաղթենք նորանոր յաջողութիւններ, իսկ մենք անհամբեր կը սպասենք Նոյեմբեր 15-ի ելոյթին »Ալեքս« համերգասրահին մէջ (216 North Brand Boulevard, Glendale, CA 91203):

*Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել 818 243-2539, 818 265-0506, եւ կամ այցելել www.alextheatre.org, www.ticketmicket.com:*

*Հարցազրոյցը վարեց՝*
***ՀՐԱՉ ՍԵՓԵԹՃԵԱՆ***

## ՍԻՐԱՆ ՍԵԶԱ ԳՐՈՂԻՆ 110-ԱՄԵԱԿ

*Շարունակուած էջ 8-էն*

*Քրիսեանը: «Երիտասարդ Հայուհի»ին աշխատակցութիւն բերած Մարիա Քրիսեան մանրամասնօրէն վերլուծեց կնոջական գրական ամսաթերթին ներկայացուցած կարեւորութիւնը ժամանակաշրջանի հոգեբանութեան եւ մտածողութեան վրայ: «Երիտասարդ Հայուհի» պարբերականը հրատարակուած է երեք տարբեր ժամանակահատուածի ընթացքին՝ մին՝ 1932-34, երկրորդը՝ 1947-1952 իսկ երրորդը՝ 1963էն 1968 երբ Սեզա ակամայ կը հրաժարի թերթի հրատարակութենէն:*

*Քրիսեան մասնաւորաբար ներկայացուց Սեզա-խմբագիրը, հասարակական գործիչը, ընկերային դաստիարակը եւ ժամանակի պահանջքներուն գիտակից դաստիարակը:*

*Յայտագրին հետաքրքրական ելոյթն էր Անի Քիւփելեանի պատրաստած power point-ը Սեզայի ընտանեկան սահմանափակ նկարներէն առնուած: Գրողին երիտասարդութենէն մինչեւ յառաջացած տարիքին, բարեկամներու հետ, հասարակական գործունէութեան ընթացքին առնուած նկարներով Սիրան Սեզա կին գրողը պահ մը հանդիսականներուն հետ կենսունակ ներկայութիւն մը դարձաւ: Յիշատակելի նկարներ էին գրական ամսաթերթին 1932ին առաջին թիւին շապիկը, 1947 տարուան թերթի վերսկսելու թիւին շապիկը, Սեզայի ամուսինին՝ Տոքթ. Ներսէս Քիւփելեանի կամ բարեկամ գրողներու հետ առնուած նկարները:*

*Սիրան Սեզայի «Շերիֆի» պատմուածքէն ընթերցում մը կատարեց ԹՄՄ Տիգրանեան վարժարանի հայերէնի ուսուցիչ Նազիկ Գոճայեանը:*

*Ձեռնարկին վերջին խօսք առնողը եղաւ վաստակաւոր արձակագիր Սարգիս Վահագն, որ Լիբանանի մէջ մօտէն ճանչցեր էր Սեզան ու անոր գրականութիւնը: Սարգիս Վահագն կարեւորութեամբ շեշտեց իրողութիւն մը: Սիրան Սեզա թերեւս առաջին հայ գրողն էր, որ Լիբանան ու անոր յարանուանական փոքրամասնութիւններու կենցաղը, սովորոյթը, մտայնութիւնն ու հոգեբանութիւնը հայ գրականութեան մէջ բերաւ, լիբանանեան գիւղէն ու լեռնային արաբ բնակչութենէն ապրող կերպարներ ստեղծելով իր պատմուածքներուն մէջ: Սեզա բարձր գնահատեց լեռնցի լիբանանցիին բարոյական չափանիշները ու ծրագրուած կերպով ուշադրութեան առարկան դարձուց զայն իր գրականութեան մէջ:*

*Սեզայի հրատարակած երեք հատորները՝ «Պատնէշ»,«Մեղաւորուհին եւ Հեքեաթներ» առանձին մեկնաբանութեամբ ներկայացուց, իւրաքանչիւր գործ նկատելով Սեզայի գրական զարգացման լուրջ հանգրուանները:*

*Յայտագրի աւարտին, սրտի խօսքով ելոյթ ունեցաւ մեծարուող գրողին զաւակը՝ Վահագն Քիւփելեան, որ անկեղծ շնորհակալութիւններ յայտնեց Թէքէեան Մշակութայինի վարչութեան, յայտագրի վրայ ելոյթ ունեցողներուն եւ գեղարուեստական բաժնի մասնակիցներուն: Ան յատուկ անդրադարձով մը ներկայացուց Սեզայի սրամտութիւնն ու զինք շրջապատողներուն հետ իր կենսունակ յարաբերութիւնը:*

## ՍԻՐԱՆ ՍԵԶԱՆ

*Շարունակուած էջ 15-էն*

*տրուած հոգեկան հարուստ աշխարհին շնորհիւ եւ մանաւանդ՝ Սեզային նրբահիւս արուեստին հմայքով:*

*Բնականաբար, կանացի կազմախօսութեան դիւրազգացութեամբ օժտուած Սեզան չէր կրնար տարբեր մօտեցում ցուցաբերել: Հետեւաբար իր իրապաշտութիւնն իսկ զգեցաւ զգացական տարազ, որմով ան թափանցեց հոգիներէն ներս, նրբութեա՛մբ, ճշգրտութեա՛մբ եւ հարազատութեա՛մբ,- ոչ մէկ հոգեխտաբանական տեսութիւն ձեւաւորելով,- այլ, պարզապէս մարդկային հոգիին այն գաղտնի ծալքերուն մութն ու լոյսը յայտնաբերելով:*

*Ահաւասիկ նմոյշ մը միայն ՝ Սեզային կանացի աշխարհին բնորոշումներէն:*

*-«Ամէն կին պաշտպան մը կ'ուզէ: Մէկը, որուն վստահի քաղցրութեամբ, բարութեամբ: Մի՛ հաւատաք մեր արհամարհանքին. մութին մէջ լացով երգող երախաներ ենք մենք: Որքան լրիւ ըլլայ կանացիութիւնը՝ այնքան աւելի տանջող է պահանջը: Ընկեր մը, բարեկամ մը, եղբայր մը: Ու յաճախ, խանձուած թեւերով կ'իյնանք կիսամեռ: Այրերը չեն հասկնար մեզ, չեն ներեր: Պատրանախաբ կիներու հեքիաթին չեն հաւատար անոնք: Անոնցմէ շատերուն համար կինը միջոց մըն է ճոխացնելու իրենց սեփական կեանքը, հերոսանալու իսկ: Կը սիրե՞ն, կ'ատե՞ն. ո՞վ գիտէ: Նոյնիսկ կը սպաննեն եւ կը սպաննուին, բայց երբեք չեն փորձեր ըմբռնել մեզ: Իսկ մե՞նք: Մեր կեանքին ազնուագոյն մասը շռայլօրէն կը նուիրենք անոնց: Ու երբ մեր երիտասարդութիւնը, մեր գեղեցկութիւնը թարշամի ազահ, անփոյթ մատներու տակ, երբ ալ բան մը չունինք տալիք, անոնք կը վերսկսին իրենց փորձը, մինչեւ որ իրենք ալ իյնան պարտասած: Ահ, թշուառութիւնը մարդերուն: Ի՞նչպէս կը վատնենք մեծագոյն գանձը զոր տիեզերքը կը շնորհէ մեզի»:*

*Այսքան սրտբաց եւ քաջ մատնանշում՝ հիմնական պատգամն է զոր կանացի հարցով կը թելադրէ Սեզա, հեռու ֆեմինիստական աժան քարոզչութենէ, վասն մարդկային երջանկութեան եւ հաւասարակշռուած ընկերային արդարութեան:*

*Իր տեղը սփիւռքահայ գրականութեան մէջ կը մնայ, արդար եւ պատուաբեր պատուանդան մը որպէս, գեղեցիկ նուաճումով եւ կանացի նրբազգացութեամբ հարստացած:*

*Յարգանք իր անթառամ յիշատակին:*

## ՀԲԸՄ-Ի ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

*Շարունակուած էջ 13-էն*

*եւ ճշգրտութեամբ գործադրուած՝ յայտագիր մը, որ պիտի գոհացնէ ամէն տեսակի ճաշակ:*

*Արդարեւ՝ միջազգային ճանաչում ստացած արհեստավարժ արուեստագէտներ հրաւիրուած են խանդավառելու հրաւիրեալները: Անոնք պիտի ունկնդրեն Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցէն շրջանաւարտ Անի Քրիսթիին, ինչպէս նաեւ մեզի հանրածանօթ Յարութ Յակոբեանին: Երեկոն առաւել եւս պիտի խանդավառէ DJ Therapist-ը:*

*Այս տարուայ կալան պիտի կեդրոնանայ ՀԲԸ Միութեան Արեւմտեան Ամերիկայ Շրջանային Յանձնաժողովի նուաճումներուն, ինչպէս նաեւ անոր ապագայի ծրագիրներուն վրայ: Հոս պէտք է նշել որ այդ Յանձնաժողովն է որ կը հսկէ ՀԲԸ Միութեան Արեւմտեան Ամերիկայի բոլոր մասնաճիւղերու ծրագիր-ներուն վրայ:*

*Իսկ այս տարուայ կալայի հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի երիտասարդական գործունէութեանց որովհետեւ մեր գերագոյն նպատակն է քաջալերել մեր նոր սերունդը եւ մեր հարուստ մշակութային ջահը փոխանցել անոնց, որպէսզի շարունակեն հայապահպանման մեր սրբազան պայքարը՝ օտար այս հողերուն վրայ:*

*Եկէք եւ միասնաբար վայելենք անմոռանալի այդ օրը:*

*Տոմսեր ապահովման համար կը խնդրուի անյապաղ հեռաձայնել գրասենեակ՝ հետեւեալ թիւով: (626) 794-7942 կամ Տիկ. Հերմինէ Ճանոյեանին՝ հետեւեալ թիւով: (818) 388-5918*


ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Massis
Weekly
You are cordially invited to celebrate
«ՄԱՍԻՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ-ի 33-րդ Տարեդարձի
Ճաշկերոյթ Պարահանդէս
Massis Weekly 33rd Anniversary
Dinner Dance
Երեկոն պիտի խանդավառէ
սիրուած Երգիչ՝
Յարութ Յակոբեան
Performance by:
HAROUT HAGOPIAN
Տեղի կ՚ունենայ
Շաբաթ
9 Նոյեմբեր, 2013
Ժամը 8-էն սկսեալ՝
Saturday November
9, 2013
Starting at 8:00 p.m.
At the Arbat Banquet Hall
711 S. San Fernando Rd. Burbank, CA 91502
Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել
For more info. call: (626)7 97-7680
Donation $75.00